

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎ**

**ԹԵԶԻՍՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**27-29 ապրիլի 2010 թ.**

**Երևանի պետական համալսարան, ք. Երևան**

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2010

ՀՏԴ 941 (479.25) : 378 : 06  
ԳՄԴ 63.3 (27) + 74.58  
Հ 282

**Հրատարակված է  
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի  
խորհրդի երաշխավորությամբ**

Խմբագրական խորհուրդ

**Մինասյան Էդիկ Գարեգինի – պ.գ.դ., պրոֆեսոր  
Հովհաննիսյան Հայկազ Ժորայի - պ.գ.դ., պրոֆեսոր  
Հովսեփյան Յուրիկ Լենդրուշի - պ.գ.թ., դոցենտ  
Բադալյան Գեղամ Միհրանի - ասիստենտ**

Գիտաժողովի կազմկոմիտե

**Խաչատրյան Կառլեն  
Հովսեփյան Ստեփան  
Մալխասյան Վահան  
Սարգսյան Դավիթ  
Գիրգորյան Արամայիս  
Հալաջյան Շահանե  
Հովհաննիսյան Զոհրաբ  
Հարությունյան Խաչիկ  
Մանուկյան Լուսինե**

Հ 282 Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողով, 27-29-ը ապրիլի 2010 թ.: Թեզիսների ժղվ.- Եր.: ԵՊՀ հրատ., 2010.- 74 էջ:

Թեզիսների ժողովածուում ներառված են Հայոց Ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերության կազմակերպած հանրապետական ուսանողական գիտաժողովի ընթացքում ներկայացվելիք աշխատանքների թեզիսները:

ՀՏԴ 941 (479.25) : 378 : 06  
ԳՄԴ 63.3 (27) + 74.58

ISBN 978-5-8084-1255-2

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.  
© ԵՊՀ ՈՒԳԸ, 2010 թ.

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1915 Թ. ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ**

Ներկայացնելով Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը՝ մեր զեկույցում անդրադառնալու ենք հետևյալ կետերին.

1. Ցեղասպանություն (գենոցիդ) երևույթը սահմանող Միավորված Ազգերի Կազմակերպության 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված կոնվենցիան:

«Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատիժ սահմանելու» մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայում նշվում է, որ ցեղասպանությունը, անկախ այն հանգամանքից իրականացվել է խաղաղ պայմաններում, թե պատերազմի ժամանակ, միջազգային օրենքի համաձայն հանցանք է, որը ՄԱԿ-ի անդամ պետությունները պարտավորվում են կանխարգելել և պատժել: Ուստի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի առաջին և երկրորդ կետերի համաձայն Հայոց Ցեղասպանությունն իրագործած պետությունը՝ Օսմանյան կայսրությունը (ներկայիս Թուրքիան), պետք է միջազգայնորեն պատժվի:

2. Հայկական լրբբիստական կառույցների դերը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում:

Այսօր հայկական սփյուռքը հաշվվում է մոտ 10 մլն մարդ, որոնք ապրում են աշխարհի 84 երկրներում: Լոբբիստական գործունեություն ծավալելով՝ հայկական սփյուռքին հաջողվում է ամեն անգամ քննարկման դնել Հայկական Հարցը: Լոբբիստական գործունեություն ծավալելու միտումն ուղեկցվում է այդ նպատակով հայկական հատուկ կազմակերպությունների և կառույցների ստեղծմամբ: Նման կառույցներ են գործում Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Հյուսիսային և Լատինական Ամերիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, Ավստրալիայում և այլուր: Այս կառույցները

կոչվում են Հայ Դատի գրասենյակներ, որոնք պայքարում են Հայկական Հարցի լուծման համար:

3. Միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը:

Այս գործում իրենց կարևոր տեղն ունեն Միավորված Ազգերի Կազմակերպության, մասնավորապես ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների հանձնախմբի՝ ազգային փոքրամասնությունների դեմ խտրականության կանխարգելման և պաշտպանության ենթահանձնախմբի քննարկումները, որոնք բազմիցս կայացել են Հայոց Ցեղասպանության հարցի շուրջ: Հայոց Ցեղասպանությունը ճանաչվել և դատապարտվել է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից 1984 թ. ապրիլի 13-16-ին: Հայոց Ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած միջազգային կազմակերպությունների շարքում են նաև Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը և այլ կազմակերպություններ: 1987 թ. հուլիսի 18-ին Եվրոպական պառլամենտն ընդունեց բանաձև «Հայկական Հարցի քաղաքական ճանապարհով լուծման մասին»:

4. Տարբեր երկրների կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը:

Հայոց Ցեղասպանությունը տարբեր պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչվել և (կամ) դատապարտվել է հիմնականում երեք՝ հայ համայնքների, հայկական լոբբիստական կառույցների գործունեության և տարբեր պետությունների կողմից բարի կամքի դրսևորման պատճառներով: Հայոց Ցեղասպանությունը տարբեր պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչվել է տարբեր միջազգային իրավական մակարդակներով (դատապարտում, ճանաչում, համապատասխան օրենքի ընդունում և այլն): Դա հետևանք է ինչպես պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տվյալ ժամանակաշրջանում Հայոց Ցեղասպանության ճանաչման նպատակահարմարության, այնպես էլ հայկական կազմակերպությունների և հանձնախմբերի կողմից Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման միասնականորեն ընդունված ռազմավարության բացակայության:

5. ԴՅ դերակատարությունը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործում:

1991 թ. Հայաստանի անկախացումից հետո Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացում սկսվում է նոր փուլ: Լինելով Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդը՝ Հայաստանի Հանրապետությունն իր ներկայիս սահմաններով և մարդկային ռեսուրսներով կրում է Հայոց Ցեղասպանության բոլոր հետևանքները:

Նոր փուլը նշանավորվեց հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմամբ, որը Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացում նոր մոտեցումներ է ենթադրում: Չնայած այն բոլոր շահարկումներին, որոնք տեղ գտան մադրիդյան սկզբունքների և հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման շուրջ, նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը ոչ միայն չխտչընդոտեց Հայոց Ցեղասպանության ճանաչմանը, այլև այն դրվեց նոր՝ ավելի բարձր մակարդակի վրա՝ առաջ բերելով միջազգային հանրության ակտիվացումը:

Չի կարելի ձգտել քաղաքակրթության, մարդու ինքնագիտակցության զարգացման և միաժամանակ աչք փակել մարդկության պատմության մեծագույն հանցագործության դեմ: Այդուհանդերձ, Հայոց Ցեղասպանության ճանաչման համար պայքարը ոչ թե աշխարհի բոլոր պետությունների բարի կամքի դրսևորումը պետք է լինի, այլ նրանց պարտքը միջազգային իրավունքը վերահաստատելու առումով:

Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումը, դատապարտումն ու կորուստների փոխհատուցումը հանդիսանում է բոլոր այն երկրների կամ դրանց իրավահաջորդների պարտավորությունը, որոնք ստորագրել և վավերացրել են ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիան:

**ԱՐՓԻ ՆԵՐՍԵՍԻ ԱԹԱՐԵԿՅԱՆ**  
ԵՊՅ, Պատմության ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ՝ arpiatabekyan@gmail.com

## **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԷԼԻՖ ՇԱՖԱԿԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Այսօր կան թուրք գրողներ, ովքեր իրենց ստեղծագործություններում արծարծում են հայոց ցեղասպանության թեման, սակայն չկա որևէ մեկը, ով կարող է հանգիստ ապրել և ազատ ստեղծագործել թուրքիայում, ինչպես Յաշար Քեմալը, Օրհան Փանուկը, Էլիֆ Շաֆակը և ուրիշներ:

Այս 3 գրողներն էլ այսօր թուրքիայում համարվում են անցանկալի անձինք, և նրանց մուտքը թուրքիա արգելված է: Նրանք երեքն էլ մեղադրվել են նույն բանի համար՝ բարձրաձայն ու բացահայտ ցեղասպանություն բառը ասելու և արդարության ձայնը բարձրացնելու համար:

Էլիֆ Շաֆակը ծնվել է 1971 թ. Ֆրանսիայում՝ Ստրասբուրգում: Թուրքիայի առաջատար և լավագույն դափնեկիր կին գրողներից է: Նա հրատարակել է մոլեկներ, ինչպես թուրքերեն, այնպես էլ անգլերեն: Ծնողների ամուսնալուծությունից հետո մնացել է մոր հետ: Պատանեկան տարիներն անց է կացրել Մադրիդում և Օմանում: Նա ավարտել է Անկարայի Միջին Արևելքի տեխնիկական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Նույն համալսարանում նա ստացել է մագիստրանտի կոչում Քաղաքագիտության ֆակուլտետում: Շաֆակը ուսում է ստացել նաև Միչիգանի համալսարանում և Արիզոնայի համալսարանի Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների ֆակուլտետում: Այս վերադարձել է Ստամբուլ՝ քաղաք, որ միշտ եղել է սիրո և ներշնչանքի աղբյուր իր համար:

Թուրք հասարակությունը Էլիֆ Շաֆակին դեմ դուրս եկավ հատկապես նրա 2006 թ. տպագրված «Հայրն ու բիճը» վեպի համար:

Նախ և առաջ նշեմ, որ ես այս գիրքը ձեռք եմ բերել Ստամբուլում՝ ի զարմանս ինձ, որովհետև չէի կարծում, որ Թուրքիայում թույլ կտային այդ գրքի հրատարակությունն ու վաճառքը: Ավելին, այն ինձ նվիրեց մի թուրք աղջիկ, երբ իմացավ, որ ցանկանում եմ կարդալ այն: Գիրքը կարդալուց հետո ես հատվածաբար թարգմանություններ կատարեցի, որոնք տպագրվեցին հայկական թերթերից մեկում:

Գրքի սյուժեն զարգանում է միաժամանակ Ստամբուլում, Սամֆրանցիսկոյում և Արիզոնայում: Գլխավոր հերոսներն են թուրք Քազանջըների ընտանիքը և ամերիկաբնակ Իստանբուլյանների հայկական ընտանիքը: Դեպքերը զարգանում են երկու գլխավոր հերոսուհիների՝ հասակակիցներ թուրք Ասյայի և ամերիկահայ Արմանուշի միջև: Արմանուշի տատը ծագումով Ստամբուլից էր, հայրը հայ էր, իսկ մայրը՝ ամերիկուհի: Նա ինքնության ճգնաժամ էր ապրում և չէր կարողանում հասկանալ՝ ինքը հայ է, թե ամերիկացի: Իր տատիկի տունը Ստամբուլում գտնելու համար նա որոշում է մեկնել Ստամբուլ, ընդ որում այդ մասին տանը ոչինչ չի ասում: Նա մեկնում է իր խորթ հոր՝ Մուսթաֆայի ընտանիքի մոտ, որն էլ հենց վերը նշված Ասյայի քեռին էր:

Առաջին գրույցը ցեղասպանության մասին, որ բացում է Արմանուշը այդ թուրքական ընտանիքում, ապշեցուցիչ է իր անկեղծությամբ: Գրողն այնպես է նկարագրում ցեղասպանությունը, որ թվում է, թե հայ է և ապրել է Հայաստանում, զգացել է ցեղասպանության ցավն ու հետևանքները:

Երբ Արմանուշն առաջին անգամ պատմում է իր մեծ պապի՝ Օհաննես Ստամբուլյանի պատմությունը, ով ցեղասպանության զոհ է դարձել, հետաքրքիր է մեկ առ մեկ հետևել ընտանիքի անդամների արձագանքին: Այստեղ Շաֆակը յուրահատուկ նրբությամբ և՛ քննադատում, և՛ արդարացնում է ժամանակակից թուրքերի վերաբերմունքը ցեղասպանության փաստի հանդեպ. «...Որոշ մարդիկ հրեշից չեն տարբերվում,- ասաց Ջևրիյե մորաքույրը: Քսան տարի պատմության ուսուցչուհի էր եղել և նրա համար այնքան սովորական էր անցյալը ներկայից կոնկրետ սահմանազատելը, Օսմանյան կայսրությունը ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունից կտրուկ առանձնացնելը, որ այս ամբողջ պատմությունը լսում էր որպես մի այլ երկրում տեղի ունեցած խղճահարություն առաջացնող իրադարձություն: Նոր թուրքական պետությունը ստեղծվել է 1923

թվականին. այս իշխանության թվարկությունը դա է: Դրանից առաջ տեղի ունեցածը այլ շրջանի, այլ երկրի, կարճ ասած՝ ուրիշների խնդիրն է»<sup>1</sup>:

Յուրահատուկ կերպար և ընդգծված անհատականություն է Ասյայի մորաքույր Բանուն, ով բախտագուշակ էր: Այս կնոջ ուսերին մտած էին բարի և չար հրեշտակները, ում հետ նա զրուցում էր միայնակ մնալիս: Նրան շատ է հետաքրքրում այն, թե ովքեր են Արմանուշի նախնիները և թե ինչն է ստիպել նրանց լքել Ստամբուլը: Նա տեսնում է անցյալը և իր աչքերի առաջ է հառնում ցեղասպանության ողջ արհավիրքը: Այդ ժամանակ է Բանուն հասկանում, թե իրականում ինչ է կատարվել 1915 թ. նա տեսնում է ամեն ինչ, դառնում անցյալի վկան:

Վեպի հանգուցալուծումը զարմանալի է և անկանխատեսելի: 1915 թ. կորցնելով մորը և եղբայրներին՝ Արմանուշի տատը՝ Շուշանը ընկնում է մանկատուն: Նրան այնտեղից դուրս է հանում և ամուսնության առաջարկ է անում իր հոր աշխատողներից մեկը: Նրանք ամուսնանում են և երեխա են ունենում՝ Լևոնը (Լեւնտ): Մեկ տարի անց երկար փնտրտուքներից հետո Շուշանի եղբայրը գտնում է նրան և առաջարկում թողնել ընտանիքը և իր հետ մեկնել Սան-Ֆրանցիսկո: Շուշանը երկար մտածունքներից հետո կայացնում է որոշումը. նա թողնում է ընտանիքին և իրենից հուշ է թողնում միայն նոճաքարերով մի մազակալ: Հենց այս մազակալն է օգնում Արմանուշին բացահայտելու գաղտնիքը: Սան-Ֆրանցիսկոյում նա ամուսնանում է հայի հետ, երեխաներ է ունենում, և հենց այդ ընտանիքի ժառանգն էլ Արմանուշն է լինում: Այսպիսով, պարզվում է, որ նրանք մի տատի թոռներ են, հետևաբար Ասյայի մեծ ընտանիքը ոչ թե թուրքական է, այլ իրականում հայկական:

Երբեմն Շաֆակի նկարագրությունները ցեղասպանության մասին սարսեղուցիչ են ու ճշգրիտ: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ գիրքը գրված է հայի ձեռքով կամ որ նա ականատես է եղել այդ ամենին: Ճշգրիտ կերպով նկարագրված են մտավորականների ձերբակալությունների, աքսորի, տեղահանության, Կոմիտաս վարդապետի խելագարության պատկերները: Նա ամենայն անկեղծությամբ է արտացոլել իրադարձությունները և ոչ մի տեղ չկան նշված «դժբախտ իրադարձություններ», «փոխադարձ ջար-

<sup>1</sup> Elif Şafak, *Baba ve piç*, s. 172, İstanbul, 2006.

դեր» և նման այլ խուսափողական տերմիններ: Կա մի ճշմարտություն և այդ ճշմարտությունը ասվել է թուրք կին գրողի շուրթերից:

Այսօր նրան չեն ընդունում Թուրքիայում, առավել ևս նրա «Հայրն ու բիճը» ստեղծագործությունը: Սակայն կա լայնախոհ մի զանգված և հատկապես երիտասարդության մեջ, ովքեր ընդունում են ցեղասպանությունը, փորձում են հասկանալ, թե ինչ է կատարվել, ուզում են հասկանալ՝ թե ինչու: Այս վեպը նախ և առաջ անհրաժեշտ է թուրք հասարակությանը, եթե նրանք ուզում են պարզել ճշմարտությունը: Նրանք ավելի շատ ունեն նման ստեղծագործություններ ունենալու կարիք, քանի որ մենք ամեն ինչ գիտենք ցեղասպանության մասին. ժամանակն է, որ լուսավորվի նաև թուրք հանրությունը:

**ՆԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԲԱՐԱՅԱՆ**  
ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետ, ուսանող  
E-mail: [narine4ever1991@rambler.ru](mailto:narine4ever1991@rambler.ru)

## **ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԱՆՉԱՅՐԵՆԻՔ**

*Ո՛վ մարդկային արդարություն,  
թող որ թքնեմ քո ճակատին:  
Սիամանթո*

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները չունեն վաղեմության ժամկետ: Սա միակ մխիթարանքն է հայ ժողովրդի տառապյալ հոգու համար: Թերևս սա է միակ հատուցումը հայ բազմահազար նահատակների առաջ՝ հույս ունենալ, որ մի օր, հեռավոր մի օր կհաղթանակի արդարությունը:

Մասնագիտությամբ իրավագետ լինելով չեմ կարող մի կողմ դնել պարզ մարդկային զգացմունքներս և նայել այս ամենին զուտ իրավական տեսանկյունից: Ես 1915 թվականի իրադարձություններն ընկալում եմ որպես մարդ, որպես հայ մարդ, ու հոգուս ամեն անկյուն լցված է մեծագույն ակսոսանքով՝ յուրաքանչյուր անմեղ զոհի կորստի համար և մեծագույն չարությամբ՝ բոլոր անտարբեր աչքերի ու սրտերի հանդեպ:

Դեռևս ողբալի իրադարձությունների ընթացքում համաշխարհային մամուլը թնդում էր անպագոռգոռ հայտարարություններով, որոնք վերաբերում էին քաղաքակիրթ աշխարհի կողմից այս իրադարձությունների նկատմամբ անտարբերության դրսևորման անթույլատրելիությանն ու հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտության մասին: Այս ըմբոստության կրակը հանգավ նույնքան անսպասելիորեն, որքան ծագել էր, ինչի մասին է վկայում ներկայումս հայ ժողովրդի պայքարը դեռևս 95 տարի առաջ տեղի ունեցած վայրագությունների դատապարտման և հատուցման համար: Սակայն հայոց ցեղասպանության ճանաչումը եղել և մնում է

պարզապես քաղաքական թատերական ակտ, որը նույնն է թերևս եվրոպական պետությունների մեծամասնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների համար՝ Թուրքիան ավելի շահավետ աշխարհագրական և տնտեսական գործընկեր է, Հայաստանն առաջարկելու քիչ բան ունի՝ միայն իր արդարացիությունը, որը բավական լուրջ հիմնավորում չէ: Վաճառվող քաղաքական գործիչների, նենգափոխվող պատմության, կույր անհավատության և վերջերս առաջ եկած տնտեսական խոր ճգնաժամի պայմաններում մարդկային բոլոր արժանիքներին փոխարինելու է եկել Ձերդ Գերագանցություն շահը:

1915 թվականի ոճրագործության մասին չեն լռել շատ համաշխարհային նշանակություն ունեցող դեմքեր՝ Արմին Վեգներ, Էռնեստ Վերներ, Յոհաննես Լեփսիուս, Ֆրիտյոֆ Նանսեն: Սակայն այդ անիծյալ քաղաքականությունն ուղղակի կուլ տվեց 1,5 մլն հայ տառապյալների օգնության և արդարության ճիչերը: Հետո եղավ ԽՍՀՄ-ը և հայ ժողովուրդն այս անգամ կրեց քանակական պարտություն ու նորից լռեցվեց, իսկ հիմա ...

Այս սարսափելի ժամանակաշրջանում ձեռնարկվեց Նենեսիս գործողությունը, բայց սա դեռ բավարար չէր հագեցնելու համար հայ ժողովրդի վրեժի ծարավը, և ձևավորվեց ԱՍՍԱԼԱ խմբավորումը, որը աշխարհը համարում է ահաբեկչական կազմակերպություն, իսկ ես՝ հոգու մխիթարանք: ԽՍՀՄ գոյության տարիներին՝ 1960-ական թթ. հայ ժողովուրդը քաջություն ունեցավ պայքարել իր իսկ պետության կողմից այս ոճրագործության ճանաչման համար: Ցույցեր տեղի ունեցան Ֆրանսիայում, Գերմանիայում և վերջապես Խորհրդային Հայաստանում: Արդյունքն այժմ Երևանի ամենաբարձր կետում գտնվող Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն է:

Իմ ելույթում մաքսիմալ բացահայտված են մի աներկիր ժողովրդի չարչարանքների պատճառները, ընթացքը, հետևանքներն ու ներկան: Ամեն դեպքում այլևս ոչինչ ետ բերել հնարավոր չէ, բայց լռելն էլ դեմ է մարդկային խղճին:

**ՍԵՂԱ ՉԱԿՈՒԲԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*ԵՊԳ, Միջազգային հարաբերություններ ֆակուլտետ, ուսանող*

*E-mail: Seda 9009@mail.ru*

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ**

Ցեղասպանությունը բռնի կերպով համակենտրոնացման ճամբարներ քշելու, զանգվածային կոտորածների և այլ անմարդկային կազմակերպված հանցագործությունների ծայրահեղ տեսակն է, որի տիպիկ օրինակն է նացիստական Գերմանիայում հրեաների հանդեպ իրագործված հոլոքոստը: Ռոբերտ Մելանը, Լուվրենս Լե Բլանը և այլոք որպես մեր ժամանակների դասական ցեղասպանության օրինակներ բերում են 1915 թ. հայերի կոտորածները և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հրեաների կոտորածները: Սակայն Թուրքիայի այսօրվա կառավարությունը հերքում է այն փաստը, որ անցյալում իր երկրի կառավարությունը իրագործել է որևէ մեծածավալ կոտորած և մարդկանց արտաքսում: Սակայն հայերի ցեղասպանությունը ապացուցող դիվանագիտական փաստաթղթեր կան բազմաթիվ երկրներում: Այնուամենայնիվ այդ երկրների լռությունը Թուրքիայի կառավարությանը և դրա ժողովրդի օգտին է ծառայում:

Այժմ ներկայացնեն այն հիմնական փաստարկները, որոնց հիման վրա Թուրքիան փորձում է հերքել 1915 թ. ցեղասպանությունը.

1. «Վերաբնակեցման» մասին փաստարկի բացարձակ կեղծիքը ԱՄՆ Կոնգրեսին առաջարկվում է հավատ ընծայել այն բացահայտ կեղծ պնդմանը, թե տեղահանված հայ բնակչությունը վերաբնակեցման նպատակով պարզապես տեղափոխվել էր երկրի այլ շրջաններ, առանց պարզաբանելու, որ այդ շրջաններն էին Միջագետքի մահաբեր անապատները, և որ տեղահանվածներին այնտեղ սպասում էին միայն մահ ու ոչնչացում: Ստամբուլում Ամերիկյան Պետքարտուղարության հատուկ գործակալ Լյուիս Այնշտայնն արձագանքելով այս պնդմանը, ծաղրանքով նշում է. պաշտոնական

էֆենիզմը... հայկական հոգատարության դաժան երգիծանքը, որով սովորաբար քողարկում են թուրքիայում կատարվող դաժանագույն ջարդերը...»: Ամերիկյան մեկ այլ պաշտոնյա՝ Լեսլի Դեյվիսը, պատերազմի ժամանակ Չարպուբում ամերիկյան հյուպատոսը, Պետքարտուղարությանն ուղարկված իր զեկույցում նկարագրում է, թե ինչպես հայ գաղթականների մեծ խմբեր հանում էին Միջագետք տանող ճանապարհից դեպի Չարպուբ՝ «այդ գավառի սահմաններում ոչնչացնելու նպատակով... Սպանդի գավառ»: Էլ ավելի խոսուն է պատերազմի ընթացքում Միջագետքի հիշյալ գավառներում ռազմական հարցերով պատասխանատու թուրք գեներալի անկեղծ խոստովանությունը, որ «հարյուր հազարավոր աքսորյալների համար ոչ մի ապաստան չէր պատրաստվում, և ոչ էլ նախապատրաստված էր»:

2. «Օսմանյան դավաճան հայերն սպանեցին 1.1 միլիոն մահմեդականներ և 100.000 հրեա»:

Այս հայտարարության անհեթեթությունը հավասար է դրա ստորությանը: Ավելին, դա բացահայտում և շեշտում է այն անմտությունը, որով 100.000 բացարձակապես հնարովի հրեաներ ներքաշվել են այս վեճի մեջ: Ըստ թուրքական պնդումների, հայերը «միջհամայնքային բախումների» ընթացքում գազանություններ են իրականացրել, սակայն ըստ թուրքական վիճակագրական տվյալների, այդ շրջաններում հրեաների թիվը չի գերազանցել 4.000-ը: Չարք է ծագում. որտեղից և ինչպես են ծագել այդ մեղադրանքներն ու թվերը: «Միջհամայնքային բախումների» մասին երևակայությունը կարելի է կրկնել նաև 1.1 մլն մահմեդականների ոչնչացման կեղծիքի դեպքում, սակայն դա այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունը պահպանում էր չեզոքություն 1914 թ. հուլիս-նոյեմբեր, ինչպես նաև մեծ պատերազմում թուրքերի ներգրավման առաջին փուլում 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. փետրվար, գրեթե ողջ հայ տղամարդիկ զինակոչվել էին թուրքական բանակ: Պետք է՝ արդյոք եզրակացնել, որ մնացած կանայք, երեխաները և ծերերը հարձակվել և սպանել են 1.1 միլիոն մահմեդական և 100.000 հրեա: Եվ տեղին է մեջբերել ֆրանսիացի փիլիսոփա Մոնթեսքիոյի դիտարկումը. «Ոչ ոք զերծ չէ հիմարություն ասելուց, սակայն ահավոր է, երբ դա արվում է լրջությամբ»: Սակայն փաստորեն շարունակվում է «լուրջ հիմարությունը» և մի քանի օր առաջ էրդողանը հայտարարեց թուրքիայից հայերին տեղահանելու մասին, սակայն ինչպես միշտ մենք հայերս

սխալ հասկացանք, և էրդողանը նկատի է ունեցել ապօրինի գտնվող, օրինախախտ հայերի մասին, իսկ այդ դեպքում ինչո՞ւ միայն հայերը, չէ որ Թուրքիայում բնակվում են նաև բազմաթիվ այլազգիներ:

**ԱՐԱՄԱՅԻՄ ՎՅԱԶԵՍԼԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ԵՊԴ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ՝ armpatriot@gmail.com*

**ԻՍՐԱՅԵԼԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ**

Քննության առնելով Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը՝ ակամայից կարելի է հանդիպել այն երևույթին, որ մի շարք երկրներում ցեղասպանության ճանաչմանը խոչընդոտող գործոններից մեկը հրեական կազմակերպություններն ու լոբբին է: Դրան կարելի է բերել բազմաթիվ պատճառներ, սակայն թերևս ամենաիրական պատճառը պետք է փնտրել իսրայելա-թուրքական հարաբերություններում: Վաղուց հայտնի է, որ դաշնակցային պայմանագրերով իրար հետ կապված Իսրայելն ու Թուրքիան համագործակցում են նաև արտաքին քաղաքական մի շարք հարցերի շրջանակներում: Մասնավորապես Պաղեստինի մահմեդական ահաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարում Թուրքիայի աջակցությունը ստանալու համար իսրայելական կողմը օգտագործում է իր լոբբիստական կազմակերպություններին ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը տապալելու նպատակով, ինչը մեծապես բխում է Թուրքիայի արտաքին քաղաքական շահերից:

Սակայն վերջին ժամանակներս այդ հարաբերությունների մեջ լարվածություն է նկատվում:

Դա արտահայտվեց Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ Դավոսում, երբ քննարկվում էր «Գազայի հատված. խաղաղության մոդելը Մերձավոր արևելքում» թեման: Այստեղ Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը վրդովմունք արտահայտեց այն բանի համար, որ Իսրայելի վարչապետին հնարավորություն տրվեց ավելի երկար ելույթ ունենալ: «Դուք գիտեք, թե ինչպես սպանել մարդկանց», - բացականչեց Էրդողանը, երբ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը ծայնը բարձրացրեց նրա վրա:

Այս լարվածությունը բերում է նրան, որ հրեական կողմը սկսում է շահարկել Հայոց ցեղասպանության հարցը՝ այդպիսով փորձելով ճնշում գործադրել Թուրքիայի վրա:

Արձագանքներ եղան համաշխարհային զանգվածային տարբեր լրատվամիջոցներում: Տարբեր մասնագետներ իրենց կարծիքն արտահայտեցին այս միջադեպերի շուրջ:

Իսրայելական Կնեսետում Հայոց ցեասպանության ճանաչման կողմնակից պատգամավոր, ՄԵՐԵՑ կուսակցության առաջնորդ Խալիմ Օրոնի կողմից բարձրացված «Մեծ Եղեռնը» պաշտոնապես ցեղասպանություն ճանաչելու հարցը չգտավ աջակիցների: Սակայն որոշում ընդունվեց այդ մասին քննարկումները շարունակել Կնեսետում, այլ համձնաժողովների շրջանակներում:

Հարց է ծագում. արդյոք այսօր Իսրայելը պատրաստ է ճանաչելու «Մեծ Եղեռնը» որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, թեկուզև որպես հակաքայլ թուրքերի դիրքորոշմանը Պաղեստինի հարցում: Այստեղ պատասխանը կարող է լինել միանշանակ: Ո՛՛: Իսրայելը պատրաստ չի և չի էլ պատրաստվում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Սա պարզ է դառնում, երբ հետևում ենք իսրայելական պաշտոնատար անձանց կամ փորձագետների ելույթներին:

Ամեն դեպքում հայկական կողմը կարող է օգուտ քաղել ներկա քաղաքական զարգացումներից և բավականին առաջ մղել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Անհրաժեշտ է կատարել ճիշտ եզրակացություններ պատմության դասերից, երբեք չվատահել շահագրգիռ կողմերի քաղաքականության առժամանակյա փոփոխմանը, լինել զգոն ու ճկուն միջազգային քաղաքական վայրիվերումներում:

**ՎԱՐՊՈՒՅԻ ՀԱՎՈՐԻ ԳՈՒՄՐՈՒՅԱԼ**

*ԵՊՅ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ՝ vard6661@rambler.ru*

## **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԵՏՎԱՍԱՎԱԾՔԱՅԻՆ ՍԹՐԵՍ, ՀՈԳԵՎՆԱՍՎԱԾՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ցեղասպանությունը հանցագործություն է, որը բնութագրվում է ոչ միայն մարդկային զոհերի մեծ թվով, այլև մեծ թվով հանցագործների ներգրավմամբ: Գրականության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեծմասամբ ցեղասպանության կազմակերպողներն ու իրագործողները առողջ մարդիկ են\*:

Հոդվածում հիմնական ուշադրությունը դարձվում է ցեղասպանության կազմակերպման հոգեբանական կողմերի, դրա հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական մոտիվների, և ցեղասպանությունը կրող և իրագործող կողմերի հոգեբանական առանձնահատկությունների:

Փորձելով բացատրել ցեղասպանության երևույթը՝ ամերիկացի հոգեբան Իրվին Ստաուբը ներմուծել է «ժանր ժամանակներ» հասկացությունը, որը նրա կարծիքով, միշտ նախորդում է ցեղասպանությանը\*: Ստաուբը առաջարկում է երկու պայման, նախ՝ ժանր ժամանակների ընթացքում մարդկանց մոտ կուտակվում են լարվածությունը, ագրեսիան, ֆրոստրատիվ վիճակները, որոնք հետագայում ելք են գտնում ցեղասպանության ընթացքում:

Երկրորդ կարևոր պայմանը «թշնամու» առկայությունն է, ով, առաջին հերթին, պատասխանատու է երկրում գոյություն ունեցող միջէթնիկական լարվածության, փոխադարձ անհանդուրժողականության ու դժբախտությունների համար, և առաջնային խնդիրն է նրա վերացումը, ինչի արդյունքում մնացած հիմնախնդիրների լուծումը ավելի հեշտ կլինի:

Ի. Ստաուբը, ուսումնասիրելով ցեղասպանություն իրագործող ժողովուրդներին, եկավ այն եզրակացության, որ ցեղասպանությունը հնարավոր չէ առանց «զոհ ազգի» նկատմամբ ատելություն

սերմանելու, ինչը ձևավորվում ու զարգանում է դեռևս մանկական հասակից:

Մինչև բուն ցեղասպանության գործողությունները, իրականացնողների կողմը շարունակաբար հրահրում է ահաբեկչական գործողությունների, զանգվածային բռնությունների, մեծ ու փոքր բախումների պլանավորված սցենարները: Ջարդարարները և ցեղասպանություն իրագործողները համոզված են իրենց «ճշմարտությունների» բացարձակության, ինչպես նաև կատարվածի նկատմամբ անպարտելիության մեջ:

Ինչպես ամեն մի ծանր հանցագործություն, առավել ևս ցեղասպանությունը վաղեմություն չունի, թեկուզ և այն պատճառով, որ հետևանքների վերաբերյալ մարդկանց հոգեկանում մնում են ծանր հուշեր, վնասվածքներ, հետվնասվածքային սթրեսային խանգարումներ\*:

Անհանգստացնող հուշերն ու հոգեցնցման արտահայտություններն առավելապես ի հայտ են գալիս մեծահասակների շրջանում: Ցեղասպանությունն անկախ տարիքից արմատացած է հայերի ենթագիտակցության մեջ: Այն ի հայտ է գալիս, երբ տվյալ անհատը նորից է ենթարկվում հոգեվնասվածքի, կամ եթե հասուն տարիքում իմաստավորում է անցյալը, վերասահմանում ինքնուրույնությունը [1]:

Նախկին ԽՍՀՄ պետության կողմից 30-40-ական թվականների իրականացրած բռնությունների ու քստորների հետևանքները պակաս ազդեցություն չունեցան եղեռն ապրած հայերի սերունդների վրա: Երկրորդ համաշխարհայինից հետո բազում կորուստներ տարած վերապրող սերնդի հիմնական մասը հարմարվեց խաղաղ, ստեղծագործ կյանքին, ունեցավ սերունդներ, որոնք «էստաֆետը» փոխանցեցին մեզ: Սակայն, ինչպես ցույց են տալիս գրականության վերլուծությունները, ցավի, վնասվածքի հետևանքները մնում են մարդու հոգեկանում շատ երկար ժամանակ, եթե նրանց հետ կանխարգելման և վերականգնողական աշխատանքներ չեն իրականացվում:

Ձգացումների խցանման երևույթին հոգեբանները զուգորդում են «լռության դավը», քանի որ լռություն են պահում ոչ միայն վերապրող զոհերը, նրանցով զբաղվող հոգեբանները, այլև ոճրագործները: Մեր խորին համոզմամբ ցեղասպանությունն ու ցե-

ղասպանության հուշերը ազդել են ոչ թե սոսկ արևմտահայերի մի սերնդի, այլև հայ ժողովրդի ճնշող մեծամասնության վրա:

Չաճախ մարդկային ուղեղը վարժվում է շրջակա միջավայրի թելադրած պայմաններին՝ ներառյալ հոգեցնցմանը, անգիտակցաբար ի հայտ է բերում պաշտպանական միջոցներ, որոնցից են ժխտումը, արտամղումը, փոխարկումը, ռացիոնալիզացիան, նույնացումը, տարանջատումը, սուբլիմացումը: Անհատը հոգեբանական ապաքինման ենթարկվելիս ընկալում է այդ երևույթը, ի վիճակի է լինում զգացմունքներն ու իրադարձությունները քննել, ինքն իրեն հասկանալ և յուրացնել հարմարվողական նոր միջոցներ, որոնք ապահովում են շրջապատի հետ իր բնականոն հարաբերությունները, ներքին անդորրը:

Ամփոփելով կարող ենք պնդել այն միտքը, որ հայ ժողովուրդը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար կրում է ցեղասպանության համընդհանուր հետևանքները, այսինքն՝ ցեղասպանությունից փրկված հայերի ու հաջորդող սերունդների հոգեվնասվածքի սպիացումը մինչև հիմա չի ավարտվել:

**ԱՐՄԵՆ ՎԱՆՏԵՐԻ ԵՍԱՅԱՆՑ**

*ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ,*

*հայ արվեստի պատմության և տեսության ամբիոն, ասպիրանտ*

*էլ. փոստ՝ armen-y@hotmail.com*

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԵՆՑԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Հայոց ցեղասպանությունը սփյուռքահայության ձևավորման հիմնական պատճառներից մեկն է: Արդյունքում աշխարհով մեկ տարածված հայերը ստեղծեցին յուրօրինակ մշակութային օջախներ՝ իրենց հատուկ միջավայրով: Այդ միջավայրում 20-րդ դարի ընթացքում ի հայտ եկավ հայ արվեստագետների մի խումբ, որի ներկայացուցիչները իրենց հոգու մեջ ուղղակիորեն կրում էին Հայոց Եղեմնի կնիքը, ինչը բացահայտ կամ թաքնված կերպով արտացոլվում էր նրանց ստեղծագործություններում:

Այդ կնիքն իր մեջ կրող արվեստագետների թվին է պատկանում Հարություն Կալենցը, ում թողած գեղարվեստական ժառանգությունը 20-րդ դարի հայ կերպարվեստի կարևոր սյուներից մեկն է: Հայկական ներկայմակի մեծագույն վարպետների շարքում իր ուրույն տեղն ունի Կալենցը, ում բուռն ներաշխարհը կարողացել է իր արտահայտումը գտնել գեղանկարչական ամենատարածված ժանրերում՝ նատյունորտ, բնապատկեր և դիմանկար: Հատկապես վերջինս մեծ տեղ է գրավում արվեստագետի ստեղծագործական ժառանգության մեջ: Այս հանգամանքը հավանաբար կարելի է բացատրել նրանով, որ Կալենցին՝ որպես ծանր ճակատագրի տեր մարդու, ով իր կյանքի ընթացքում մեկ անգամ չէ, որ տեսել էր դրա դաժան դրսևորումները, հաջողվում էր թափանցել մարդկային հոգու խորքերն ու ներկայացնել բնորդի թաքնված ներաշխարհը: Ինչպես նշվեց, Կալենցը դաժան ճակատագրի տեր անձնավորություն էր: Սակայն այդպիսի կյանքը ոչ թե ատելությանը, այլ սիրով է լցրել նրա հոգին: Նա հասկանում էր կյանքի յուրաքանչյուր վայրկյանի գեղեցկությունն ու կարողանում էր գնահատել այն: Մեծ արվեստագետն ամեն ինչի մեջ գեղեցիկն է փնտրել:

Հարություն Տիրատուրի Կալենցը ծնվել է Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգի Կյուրին գյուղաքաղաքում: 1915 թվականին կորցնելով զրեթե բոլոր հարազատներին՝ նա հայտնվում է Հալեպի ազգային որբանոցում: Հարություն Կալենցի սերը արվեստի նկատմամբ ի հայտ է եկել ինքնաբերաբար: Ոչ ոք նրա մեջ այն չի սերմանել: Սակայն, չնոռանանք, որ 1915 թվականի արհավիրքը չէր կարող իր խոր հետքը չթողնել երեխայի էության վրա և պետք է իր արտահայտությունը գտներ: Եվ Կալենցը վաղ մանկուց իր հոգու յուրաքանչյուր թրթիռ վերածել է նկարի: Այսպես, գրող Ռաֆայել Արամյանը նշում է. «Առաջին գործը, որը Կալենցը նկարել է դպրոցում, եղել է մի բնանկար. որբացած, միայնակ ծառ, կողքին սափրած գլխով մի տղա և երկար, շատ երկար ճանապարհ՝ գաղթականների ճանապարհ»: Սա, անկասկած, հոգու ճիչ է եղել:

Արդեն պատանի Կալենցը հոգու խորքում զգում էր, որ իր ողջ կյանքը նվիրելու է արվեստին: Կարճ ժամանակահատվածում նրան հաջողվում է մեծ համբավ ձեռք բերել Մերձավոր Արևելքում: Նա եղել է Լիբանանի «Արվեստի բարեկամների միության» հիմնադիրներից մեկը, ինչպես նաև իր ներդրումն է ունեցել «Լիբանանի գեղանկարիչների միության» կազմավորման գործում: Ներկայացրել է Լիբանանը Նյու Յորքի համաշխարհային ցուցահանդեսին 1939 թվականին: 1946 թվականին հայրենադարձվել է Խորհրդային Հայաստան և կյանքի վերջին 20 տարիներն ապրել է հայրենիքում:

Հարություն Կալենցի արվեստում կենտրոնացված է մի ողջ սերնդի ցավը: Շուրջ երեք տարի ուսումնասիրելով արվեստագետի ստեղծագործությունները՝ կարող ենք վստահորեն նշել, որ Կալենցի գեղարվեստական ժառանգությունում եղեռնի թեման արտահայտվել է թե ուղղակի և թե անուղղակի կերպով: Դիտարկելով նկարչի դիմանկարչական աշխատանքները՝ ակնհայտորեն երևում է այն կարմիր թելը, որն անցել է արվեստագետի ողջ ստեղծագործական կյանքով. դա նկարչի հոգու թախիծն է՝ արտացոլված իր բնորդների աչքերում: Կալենցի ընդհանուր արվեստը կարծես կենսասիրության բացահայտ պոռթկում լինի, ինչն արտահայտված է վառ հնչեղ գույներով կատարված աշխատանքներում: Այս գունային մեղեդայնությունը կարելի է դիտարկել որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ. Կալենցն իր դժնդակ հիշողությունների դեմ պայքարել է արվեստի միջոցով:

Այսօր հատկապես կարևորվում է Կալենցի գրաֆիկական աշխատանքների ներկայացումը, որոնք բացահայտում են արվեստագետի ստեղծագործության դեռևս անհայտ եզրերից մեկը: Մինչ այժմ գրեթե չուսումնասիրված և չիրատարակված գրաֆիկական աշխատանքներում առանձին խումբ են կազմում Հայոց ցեղասպանության թեմաներով կատարված աշխատանքները, որոնք մանկության հուշերի յուրահատուկ գեղարվեստական արգասիքն են հանդիսանում: Կալենցի արվեստի հետազոտության, ուսումնասիրության և դրանց ներկայացման արդիականությունը հիմնավորվում է նաև մեծ արվեստագետի 100-ամյա հոբելյանով:

**ԱՆՆԱ ՀԱՄՈՅԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ**

*ԵՊՅ Իջևանի մասնաճյուղ,*

*Հունանիտար գիտությունների ֆակուլտետ, ուսանող*

**ԻՆՉՈՒ՞ ԵՆ ԹՈՒՐՔԵՐԸ ԴԻՄԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԻՆՉՈՒ՞ ԵՆ ՆԵՐԿԱ ԹՈՒՐՔԵՐԸ ԺՆՏՈՒՄ ԱՅՆ**

Սույն հոգեբանական վերլուծության մեջ մենք ջանացել ենք վերը նշված գործոններին անդրադառնալ և այն մեկնաբանել՝ հենվելով հոգեբանական գիտության կողմից ընձեռնված գիտական հիմնավորումների վրա:

Ինչու են թուրքերը դիմել հայերի ցեղասպանության, ի՞նչ հոգեբանական դրդապատճառներից ելնելով նրանք դիմեցին այդ հրեշափոր քայլին:

Շրջանցելով պատմագիտական և քաղաքական բազմաթիվ շարժառիթները, որոնց վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, հարկ ենք համարում շատ հակիրճ տալ հոգեբանական այն դրդապատճառները, որոնց հիման վրա կատարվեց այդ նախճիրը:

90 տարի միտում է այդ վերքը: Միտում է, որովհետև ֆիզիկական բնաջնջումը դեռևս չի նշանակում, թե մոռացությունը կուլ կտա այն, քանի որ մարմինը թեկուզ չկա, բայց ոգին ապրում է, և նա չի հանգստանա մինչև արդարության զանգերը չհնչեն:

Այս խնդրում կարևոր դեր է խաղացել թուրքերի նախորդ սերունդների կողմից հետնորդներին փոխանցված, ժառանգված վայրագ գեմը: Թուրքերի նախնիները, լինելով թափառաշրջիկ ազգ, նախնիներն զրկված լինելով հողից և սեփական արտադրությունից, միշտ վարել են նվաճողական քաղաքականություն: Այսինքն, ուրիշների ստեղծած բարքերին տիրացող:

Հոգեբանությունը ցույց է տալիս, որ ագրեսիվության նշված գծերը, ինչքան էլ քաղաքակրթվեն հաջորդ սերունդները, պահպանվում են իրենց ենթագիտակցության ոլորտում և պատեհ առիթ լինե-

լու դեպքում դրանք ուժգնանում ու տիրապետող են դառնում՝ խեղճացնելով գիտակցությունը:

Գիտակցության մեջ ծնված մոլուցքը վեր է ածվում անկառավարելի կրքերի:

Արտաքին բարետես կազմվածքը և (կամ) ժամանակակից քաղաքակիրթ հագուստ - կապուստը թվացյալ են: Խորքում դեռևս չի «մահացել» վայրենու կիրքը: Այն քողարկված է խորքում ու չի բացառվում, որ այսուհետ ևս հարմար ժամանակ գազանը կրկին կարող է արթնանալ: Քաղաքակրթվելու համար երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի քաղաքակրթվի նախկին հիվանդ գեներ: Յոգեբանական մյուս պատճառը, որ սամձագերծեց երիտթուրքերին, այսպես ասած, ցինիզմն է: Այս որակը հաճախ է դրսևորվում միջէթնիկական փոխհարաբերություններում և կարող է մեծ ավերվածություններ առաջացնել, ինչպիսին եղավ երիտթուրքերի կողմից: Նրանց պարագլուխները տիպիկ ցինիկներ էին: Ցինիզմը նաև, ըստ հոգեբանների մտքերի, գաղափարների, հուշերի բեռից ազատվելն է:

Ինչու՞ ներկա թուրքերը ժխտում են հայերի ցեղասպանությունը: Մեղքի զգացումի վերապրման տանջանքը թույլ չի տալիս վերագնահատել կատարված հրեշավորությունները, այնքան ահավոր է եղել այն: Իրենց վարկանիշը պաշտպանելու համար թուրքերի ներկա կառավարությունը ստիպված է դիմել մի շարք հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառումների, ինչպիսիք են իրականության ժխտումը, իրեն չհասկացողի տեղ դնելը, որը միաժամանակ նշանակում է ինքն իրեն խաբել:

- Ագրեսիվության արդարացում
- Ռացիոնալիզացիա (նաև էթնիկական)
- Ինտելեկտուալիզացիա՝ թվացյալ հիմնավորումներով արդարացում
- Ազատում մեղավորության զգացումից. դրանով փրկում են իր և իր խմբի ինքնագնահատականը, որով և պաշտպանվում են սթրես ապրելուց: Եվ, ընդհակառակը, չեն ապրում տուժող կողմի սթրես-հոգեվիճակի ծանրությունը
- Արտամղում՝ անցանկալի, ծանր մտքերից ու հոգսերից ազատվելու համար
- Ճնշում՝ գիտակցորեն դուրս մղել իր համար տհաճ պրոբլեմները

- Ժխտում` այս մեխանիզմը կիրառողը ինքն իրեն կամավոր կերպով չհասկացող է ձևացնում
- Էսկապիզմ` տհաճ իրականությունից փախչելու հակում, որը հաճախ դառնում է մարդու հարմարվողական ստրատեգիա:

Պաշտպանական ադապտացիայի կիրառումը, որը կարծում ենք` վերջիվերջո կարող է սպառվել, թուրքերը, կամա թե ականա, գլխահակ իրենց վրա կվերցնեն նախնիների հակամարդկային արարքի ծանրության ողջ բեռը: Մեր ազգային ցավը գնալով այնքան է ուժեղանում, որ միևնույնն է փշրելու է թուրքի ինքնապաշտպանության վերը նշված մեխանիզմների կայունությունը:

**ԳԱՅԱՆԵ ԱՐՄԵՆԻ ՀԱԿՈՐՅԱՆ**  
ՀՊՏՀ, Միջազգային տնտեսական  
հարաբերությունների ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ` Gayane92@list.ru

## **ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՑ**

- Ինչու՞ էր Մեծ Եղեռնը ցեղասպանություն

ՄԱԿ-ի կոնվենցիան

Ցեղասպանություն (գենոցիդ) տերմինը հստակորեն սահմանվել է Միավորված Ազգերի Կազմակերպության 1948 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված կոնվենցիայով: Ահա այդ կոնվենցիան.

Հոդված I. Պայմանավորվող կողմերը հավաստում են, որ ցեղասպանությունը, անկախ այն հանգամանքից, իրականացվել է խաղաղ թե պատերազմի ժամանակ, միջազգային օրենքով համարվում է հանցանք, որն իրենք պարտավորվում են կանխարգելել և պատժել:

Հոդված II. Սույն համաձայնագիրը ցեղասպանություն է համարում հետևյալ գործողություններից ցանկացածը, որ կատարվել է մի ամբողջ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի հանդեպ՝ այն մասնակիորեն կամ ամբողջությամբ ոչնչացնելու մտադրությամբ:

ա) խմբի անդամների սպանություն,

բ) խմբի անդամներին մարմնական կամ մտավոր ծանր վնասի պատճառում,

գ) միտումնավոր այնպիսի կենսապայմանների ստեղծում այդ խմբի համար, որ հաշվարկված են հանգեցնելու նրանց լիարժեք կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

դ) այնպիսի միջոցառումների պարտադրում, որ կկանխարգելեն այդ խմբի ծնելիությունը,

ե) այդ խմբի երեխաներին հարկադրաբար այլ խումբ տեղափոխելը:

Այսպիսով, ցեղասպանություն են որակվում այն գործողությունները, որոնք թվարկված են այս կոնվենցիայի II հոդվածում: Հայոց Մեծ եղեռնը այս կամ այն չափով վերաբերում է նշված բոլոր 5 կետերին՝ հատկապես առաջին երկուսին.

ա) խմբի անդամների սպանություն

բ) խմբի անդամներին մարմնական կամ մտավոր ծանր վնասի պատճառում:

Այնպես որ, ոչ մի կասկած չկա, որ 1915 թվականին Արևմտյան Հայաստանում կատարվածը ցեղասպանություն էր:

Կոնվենցիայի III հոդվածի առաջին և երկրորդ կետերի համաձայն, այն է

ա) ցեղասպանության իրականացումը,

բ) ցեղասպանության իրագործման հղացումը:

Հայոց Ցեղասպանությունը իրագործած պետությունը՝ Օսմանյան կայսրությունը՝ ներկայիս Թուրքիան, պետք է միջազգայնորեն պատժվի:

Կոնվենցիայի IV և VI հոդվածների համաձայն, ցեղասպանություն կազմակերպած անձինք պետք է դատվեին ցեղասպանություն կատարած երկրում կամ միջազգային քրեական տրիբունալում:

1919 թվականին Կոնստանդնուպոլսի ռազմական դատարանը հեռակա կարգով մահապատժի ենթարկեց Թալեթ, Էնվեր, Ջեմալ փաշաներին և դոկտոր Նազըմին: Բայց այդ դատավճիռը այդպես էլ չիրագործվեց: Տարիներ անց մահապատիժը ի կատար ածեցին հայ վրիժառուները...

• Հայոց Ցեղասպանության դատապարտումը և միջազգային ճանաչումը

Անտանտի 1915 թ. մայիսի 24-ի նոտան Թուրքիայի գործողությունները որակում է որպես «Թուրքիայի նոր ոճիրը մարդկության դեմ»: Այդ նշանակում է, որ տերությունները ընդունում էին, որ Թուրքիան նախկինում էլ էր հանցագործություններ կատարել:

Ինչ խոսք, Հայոց ցեղասպանությունը անպայման դեր է խաղացել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի համար՝ ցեղասպանության հանցագործության նախազգուշացման և պատժի վերաբերյալ: 1915 և 1918 թ. հայերի տեղահանությունը և ջարդերը Թուրքիայում հիմք հանդիսացան իրավաբան Ռաֆայել Լենկինի համար կազմելու ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիան:

Հայերի ցեղասպանությունը դատապարտել է Ու. Չերչիլը, այն համարելով պատմության խայտառակ ժամանակաշրջան: Հայերի ցեղասպանությունը խոստովանել է անգամ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մ. Քեմալ Աթաթուրքը: Իսկ Թուրքիայի 1918-1919 թթ. ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆը ասել է . «Մեր ղեկավարները որոշել էին ոչնչացնել հայերին և դա իրականացրին: Այդ ընդունվել էր Երիտթուրքերի ԿԿ-ի կողմից և իրագործել էր կառավարությունը»:

Միջազգային իրավունքի տեսակետից ցեղասպանությունը ծանր հանցագործություն է: Երկար ժամանակ թուրք քաղաքական շրջանակները ուղղակի ժխտում էին իրենց կողմից հայերի ֆիզիկական ոչնչացման փաստը: Իսկ, երբ միջազգային հանրությունը սկսեց դատապարտել թուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունը, նրանք փոքր-ինչ «զիջողականություն» (հանդուրժողականություն) ցուցաբերեցին ցեղասպանության շուրջ և համաձայնվեցին հարցի քննությունը հանձնել պատմաբաններին:

Ներկայումս Թուրքիան ցեղասպանության խնդրում իր մարտավարությունը փոխել է: Տեսնելով ցեղասպանության մերժման կույր անհեռանկարայնությունը՝ փորձում են իրավական բնույթի կեղծ փաստաթղթեր ու հիմնավորումներ անել:

Այսպես օրինակ, ձգտելով խուսափել միջազգային պատասխանատվությունից թուրք քաղաքագետները, որ իբր իրենց ոչինչ հայտնի չէ ցեղասպանության մասին, որ եթե այդ հանցագործությունը կատարված լիներ միևնույնն է այն ժամանակ չեն եղել համապատասխան իրավական հիմքեր: Այսպես օրինակ, թուրք-հայկական այսպես կոչված հաշտեցման հանձնաժողովի անդամ Գյունդյուզ Ակտին պնդում է, որ իբր հայերի ցեղասպանությունը երբեք չի քննվել իրավական տեսանկյունից ո՛չ թուրքերի, ո՛չ էլ հայերի կողմից և ո՛չ էլ հետևապես միջազգային հանրության և պետությունների կողմից: Ահա, ցավոք, ժամանակին միջազգային հանրության հետևյալ վարքագիծը հիմք էր տալիս Թուրքիային անել այսպիսի հետևություններ:

Հայոց Ցեղասպանությունը միջազգային հանրության կողմից դատապարտվել է տարբեր մակարդակներում՝ սկսած առանձին մտավորականներից մինչև ամբողջ պետություններ: Այսօրվա դրությամբ Մեծ Եղեռնը ճանաչել և դատապարտել են աշխարհի ավելի քան 200 պետություններից 18-ը (գումարած Եվրամիությունը):

**ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ «ԹԻՎ 17 ԽԱՖԻԵՆ» ՎԵՊԸ ՈՐՊԵՍ  
ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՊԱՏԿԵՐՈՂ ԱՌԱՋԻՆ ՎԵՊ**

1869-ը մեր բազմադարյան պատմության այն եզակի թվականն է, որը մեր մշակույթի, գրականության պատմության մեջ նշանավորվում է չորս հանճարեղ և մեծամուն հայորդիների ծնունդով՝ Հովհաննես Թումանյան, Կոմիտաս, Լևոն Շանթ և Երվանդ Օտյան: Ապրելով և գործելով հայ ժողովրդի պատմության շատ կարևոր, ճակատագրական, ողբերգական իրադարձություններով լի մի ժամանակաշրջանում, լինելով հայ ժողովրդի հանճարի մարմնացում՝ նրանցից յուրաքանչյուրը դարձավ այն ամուր սյունը, որ աներեր պահեց ոչ միայն հայ մշակույթը, այլև հայ ինքնությունը: Այսօր հայ ընթերցողը Երվանդ Օտյանին ճանաչում է գլխավորապես իբրև նշանավոր երգիծաբան, և դա անառարկելի ճշմարտություն է: Բայց Օտյանը միայն մեծ երգիծաբան չէ. նա մեր գրականության ամենաբեղմնավոր գրողներից, հուշագիրներից, հրապարակախոսներից մեկն է, ով իր թե՛ պատմվածքներով, թե՛ հուշագրություններով, թե՛ վեպերով ներկայացնում է մեր պատմության կարևոր ժամանակաշրջանը՝ 19-րդ դարի վերջը և 20-րդի սկիզբը, այնպես, ինչպես եղել է, ինչպես տեսել է ինքը՝ ականատես Օտյանը: Օտյանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը «Երվանդ Օտյան, կյանքը և գործը» մենագրության մեջ (1996 թ.) գրում է. «Երվանդ Օտյանը հայ ժողովրդի հանճարի, նրա դժբախտ ճակատագրի խտացված մի մասնիկն է, որն իր կյանքով ու գործով անխզելիորեն կապված է նրա գրականությանը, պատմությանը, մամուլին, հրապարակախոսությանը, թատրոնին և իր դարաշրջանի ու հայության ողջ մշակութային ամբողջությանը»: (էջ 73-74), ապա նաև «... կյանքի հողները նրան անդադար քշել են աշխարհի լայնքով ու երկայնքով, պարտադրել ճաշակելու իր ժողովրդի ծանրա-

գույն ողբերգությունը, Մեծ Եղեռնի սարսափները... »: Եվ Մեծ Եղեռնի չարչարանաց ուղիներով, բոլոր մահաճանաբարներով անցած գրողը ոչ միայն ուժ է գտել վերապրելու արհավիրքը, այլև թղթին հանձնելու՝ որպես վկայություն, որպես անհերքելի ապացույց հայ ժողովրդին վիճակված մեծ ողբերգության: Օտյանի գրեթե բոլոր գործերն էլ այս կամ այն չափով անդրադառնում են արհավիրքին կամ դրա հետևանքով առաջացած որևէ երևույթ են բացահայտում, բայց հատկապես Մեծ Եղեռնի, դրան նախորդած և հաջորդած դեպքերի համակողմանի պատկերը Օտյանը ներկայացնում է իր հուշագրություններում և «Թիվ 17 խաֆին» վեպում: Վերջինիս մեջ Օտյանը թեմային անդրադարձել է ոչ միայն իբրև սոսկ հուշագիր, այլև իբրև գեղագետ-վիպագիր: «Թիվ 17 խաֆին» վեպը, որը գրականագետները՝ Ս. Մուրադյան, Ա. Մակարյան, Ս. Մանուկյան, համարում են Մեծ Եղեռնը պատկերող առաջին վեպը՝ գրված ականատեսի կողմից, գեղարվեստական հետաքրքիր երկ է, որը կարևորվում է թե՛ իր ճանաչողական արժեքով և թե՛ գեղարվեստական հետաքրքիր պատումով, արկածային տարրերով, իրական անձանց գեղարվեստական, կենդանի կերպարներով:

Վեպը որպես թերթոն առաջին անգամ լույս է տեսել Կ. Պոլսի «Վերջին լուր» օրաթերթի 1919 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1920 թ. հոկտեմբերի 2-ի համարներում, ապա 4 հատորով վերահրատարակել է Կահիրեի «Սինեվեպ» տպարանը: 1957 թ. Բեյրութի «Ձարթօնք» օրաթերթը այն վերահրատարակել է կրկին թերթոնի ձևով: Հայոց ցեղասպանության 85-րդ տարում Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը հրատարակել է վեպը՝ հնարավորություն տալով ընթերցողին ծանոթանալու մեծարժեք երկին:

Այս վեպը հայ գրականության մեջ մի բացառիկ երևույթ է թե՛ իր ընդգրկունությամբ, թե՛ կարևորությամբ, թե՛ պատմական և իրական դեպքերն ու դեմքերը գեղարվեստականորեն ներկայացնելու վարպետությամբ: Օտյանի ամենատես հայացքից չեն վրիպել ոչ ոք՝ և ոչինչ: Պատմական իրական դեպքերն ու դեմքերը վեպում դարձել են վիպական հետաքրքիր, կենդանի հերոսներ ու իրադարձություններ: Օտյանը երկը անվանել է **քաղաքական վեպ**, բայց ինչպես գրում է բ.գ.դ. Սամվել Մուրադյանը. «Հեղինակի կողմից իր երկին տրված ժանրային այս բնութագիրը առնվազն թերի է, քանի որ լիովին չի բացահայտում այդ վեպի ընդգրկման բուն էությունը: Իրականում այն քաղաքականի հետ միասին, 1913-1918 թթ. ողբերգական

իրադարձությունները պատկերող գեղարվեստական լայնակտավ ստեղծագործություն է» (էջ 233): Իրոք, վեպին ծանոթանալը հնարավորություն է տալիս համոզվելու այս ճշմարտության մեջ: Այսօր մեզ համար վեպի գլխավոր արժանիքն այն է, որ Օտյանն ականատես-հուշագրի ամենայն բարեխղճությամբ և գեղագետի վարպետությամբ պատկերում է՝

- Օսմանյան կառավարության կողմից Եղեռնի դժոխային ծրագրի նախապատրաստման, իրագործման ողջ ընթացքը մանրամասնորեն՝ վերհանելով պատմական ճշմարտությունը, բացահայտելով երիտթուրքերի կեղծ ժողովրդավարությունն ու ցույց տալով, որ իրականում «Յամիոյան շրջանն էր, որ կը վերսկսեր ավելի բուռն, ավելի անողոք կերպով»,
- Ժամանակի քաղաքական, հասարակական, մշակութային գրեթե բոլոր նշանավոր հայ գործիչներին (Գր. Ջոհրապ, Ջավեն Պատրիարք, Բ. Քեչյան, Կիկո, Ս. Ակնունի, Վ. Թոշկյան, Ա. Անտոնյան, Վ. Փափազյան, Փարամազ, Արժրունի և ուրիշներ), ովքեր փորձում են տարբեր միջոցներով ծառայել ազգին, նպաստել բարեփոխությունների ծրագրի հաստատմանը ստեղծված բարդ իրադրության մեջ,
- հայ հեղափոխական կուսակցությունների մասնակցությունը իրադարձություններին ու այն հեղափոխական անձնվեր երիտասարդներին (Տրդատ, Սիսակ, Սուրեն, Շավարշ Սիսաքյան, Վահե և ուրիշներ), ովքեր առանց երկմտանքի իրենց կյանքը պատրաստ են զոհաբերել ազգի փրկության մեծ գործին,
- այն հայ լրտես-խաֆիեների (Արթին Մկրտչյան, Աստիկ Մարկոսյան, Արշավիր Սահակյան, Արշակ Ալլյան, Էմին, Աբգար) գործունեությունը, երիտթուրքական կառավարությանը մատուցած բազմատեսակ գարշելի ծառայությունները, ապա և վախճանը, ովքեր ոչ պակաս հրեշային դեր են ունեցել իրենց հայրենակիցների բնաջնջման, աքսորի, ողբերգության մեջ, քան իրենց թուրք ընկերները, անգամ նրանցից էլ ավելի ստոր ու անմարդկային:

Վեպի գնահատելի արժանիքներից մեկն էլ այն է, որ ընթերցելով հայ ժողովրդի՝ 20-րդ դարասկզբի ողբերգության գեղարվեստական պատկերը, վավերագիր հանդիսացող այս վեպը՝ ոչ միայն հանգամանորեն ծանոթանում ենք ժամանակաշրջանին ու իրադարձու-

թյուններին, այլև ականա լցվում բողոքի, դատապարտության մի զգացումով ուղղված ոչ միայն թուրքերի կողմից կազմակերպված և իրականացված հրեշավոր հանցագործությանը, այլև մարդկության դեմ ուղղված ցանկացած ոճրագործության:

Թվում է՝ գրեթե անհնար պետք է լիներ նման ընդգրկում, կարևոր, ողբերգական մի շրջան ներկայացնել վեպի տեսքով՝ պահելով փաստերի հավաստիությունը, ներկայացնելով ժամանակի հասարակական, մշակութային, քաղաքական, սոցիալական, կրոնական հակասությունները, մարդկային բարդ հարաբերությունները, և այդ հսկայական փաստացի նյութը շարադրել այնպես, որ ընթերցողը մեծ հետաքրքրությամբ կարդա վեպի առաջին տողից մինչև վերջինը: Օտյանին հաջողվել է ստեղծել համապատասխան ժամանակաշրջանը և ընթերցողին փոխանցել ժամանակի ոգին, տազնապնե-րը, ողբերգականությունը: Եվ հետաքրքիրն ու գնահատելի թերևս այն է, որ Երվանդ Օտյանը չի հորինել վեպ, նա վեպել է ժամանակը՝ արվեստագետի և ականատես-հուշագրի շատ նուրբ հմտությամբ:

**МАРИАМ РОБЕРТОВНА МАДОЯН**

*ЕГУ, Факультет русской филологии, студентка  
Эл. почта marish111990@mail.ru*

## **РУССКАЯ ЛИТЕРАТУРА И ГЕНОЦИД АРМЯН**

Наш материал представляет собой информацию о том, как возник “Армянский вопрос”, какую международную огласку он имел и в особенности в международной литературе, в частности - русской.

Дается представление о геноциде армян, о погромах турок в Западной Армении.

Турки были беспощадны ко всем: к женщинам, к детям, к старикам, и в особенности к мужчинам. Геноцид преобрел международную огласку, вызвал сочувствие многих народов к бедственному положению армян. Тема геноцида нашла свое отражение в русской литературе. К этой теме обращались такие писатели и поэты, как В. Г. Белинский, А. И. Герцен, Ф. И. Тютчев, Е. Алибекова и другие.

Общими силами писателей была издана книга под названием “Братская помощь армянам”.

Многочисленные упоминания об Армении встречаются в сочинениях известного русского историка 18-го в. В. Н. Татищева.

Он является автором своего рода энциклопедического словаря, в котором сообщает сведения об Армении. Таким образом, Татищев “первым в русской исторической науке ввел в оборот относящиеся к Армении материалы, содержащиеся в русских летописях и литературных памятниках, дал к ним научные комментарии, привел в своем сборнике интересные данные об Армении, проявил интерес к армянскому языку”(1).

Наше представление о взаимоотношениях русских и армян с ранней поры до последней четверти 19-го в., отображенных в литературе, будет неполным, если мы хотя бы кратко, не вспомним многочисленные и разные по содержанию армянские упоминания, картины, образы и целые художественные произведения русской литературы до

того времени, когда официально зародились планы истребления армян в Турции.

В этом аспекте особое звучание имеют армянские отображения в сочинениях классиков русской литературы А. Грибаедова, А. Пушкина, М. Лермонтова и других. Известно, что активное участие в судьбах армянского народа принимал и великий русский писатель А. Грибоедов. Как дипломат он много сделал для освобождения армянского народа от ига Персии и Турции.

Важно и отношение армян к русским. Трагическая судьба армянского народа исторически сложилась так, что у него на родине под властью чужестранцев он терпел постоянные притеснения и угнетения, а в России имел поддержку и взаимопонимание. Поэтому все русскоподанные армяне своей преданностью и ратным трудом укрепляли мощь русского государства, активно содействовали его прогрессу.

Единство русской и армянской интересов, и русская Армения за Кавказом всегда была бельмом на глазу для других и надеждою для армян за Араксом.

Вышеизложенные материалы свидетельствуют об отношении русских к другим народам, в данном случае к армянам. Именно такое добрососедское и гуманное их отношение получило свое развитие и стало новым качеством русской литературы во времена геноцида армян.

## **РУССКИЕ ПОЭТЫ И ПИСАТЕЛИ О ГЕНОЦИДЕ АРМЯН**

Начало XX века ознаменовалось в судьбе армянского народа усиливающейся трагедией, продолжавшимся массовым избиением армян. В этих условиях многие прогрессивные деятели мира искали пути оказания помощи многострадальному армянскому народу. В их числе было много русских поэтов и писателей, которые активно выступали в защиту армян: А. Н. Мандельштам, К. Д. Бальмонт, В. К. Звягинцева, В. И. Немирович – Данченко, А. А. Тарковский, Ю. А. Веселовский и многие другие.

В моей работе я написала о таких поэтах и писателях, как М. Горький, И. А. Бунин, А. П. Кулебякин, С. Кроткий, Я. Барановский, через деятельность и творчество которых попыталась показать их отношение к армянскому народу и к его трагедии.

- **М. Горький** – великий гуманист, русский писатель, общественный деятель. Резкое осуждение межнационального подстрекательства в статье “ О кавказских событиях ” : *“...бывая на Кавказе, я всюду видел, как дружно и мирно работали грузин с татаринном и армянином, как детски весело и просто они шутили, пели и смеялись, и как трудно поверить, что эти простые, славные люди ныне тупо и бессмысленно избивают друг друга, подчиняясь подстрекательской их злой и темной силе”*. Роман “ Мать “.

- **И. А. Бунин** – поэт. Воплощение постоянных притеснений и истребления армянского народа в дореволюционных рассказах “Тень птицы” (1907), “Петлистые уши” (1916) и в стихотворении “Вдовец” (1908).

- **С. Кроткий** – поэт. Отображение трагедии армянского народа в стихотворениях “Привет Армении“, “ За счастье родины “.

• **Я. Барановский** – поэт. Его стихотворение “Армянскому народу”:

Но близок яркий день свободы:  
Тот день, что кажется мечтой,-  
Он даст армянскому народу,  
Что завоёвано борьбой!

• **А. П. Кулебякин** – генерал русской армии, поэт. Воспевание героического исторического прошлого армян в поэме “Дверь Мехера” и в цикле стихотворений “Отзвуки Вана”.

• **В. Я. Брюсов** – поэт, литературовед, переводчик, историк. Его протест против геноцида армян. Очерк “Летопись исторических судеб армянского народа”: **“... Мы уже не имели возможности использовать “Синюю книгу” 1915 г. по армянскому вопросу, где собраны факты, поистине ужасающие по своей невероятной жестокости. Чтобы ни говорили защитники турок, как бы ни ссылались на доводы “государственной необходимости”, ничто не может оправдать массовых избиений, опустошения целых провинций, обречения на голодную смерть изгоняемого населения деревень и городов и т.п. Вовсе не фантастичен подсчёт, указывающий, что в начале современной войны в турецких областях от казней, от убийств, от голода, от истощения, в пожарах, на пути в ссылку, в пустынях, назначенных для жительства, и т.п. погибло свыше миллиона душ армянского населения...”**. Цикл стихов “В Армении”, историко – литературный очерк “Поэзия Армении и её единство на протяжении веков” к антологии “Поэзия Армении с древнейших времён до наших дней” (1916).

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո պարզ դարձավ, որ Օսմանյան կայսրությունը կանգնած է փլուզման եզրին: Ուստի, անհարժեշտ էր կերտել մի հեմասյուն, թեկուզ և գաղափարական, որի հիման վրա կշարունակեր գոյատևել այն: Եվ որպես այդպիսին հանդես եկան «պանիսլամիզմի», «օսմանիզմի» և «պանթուրքիզմի» գաղափարախոսությունները: Օսմանյան ղեկավարները նպատակ ունեին երկրի տարածքն ընդարձակել դեպի արևելք, իսկ այդ ճանապարհին «սեպի» նման խրված էին հայերը, որոնց անհապաղ անհրաժեշտ էր հեռացնել Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհից: Այսպիսով՝ մշակվեց գերազանց գործող մի հակահայկական մեխանիզմ, որի արդյունքները, անկասկած, գոհացնող պետք է լինեին և որի իրագործումը կենսական խնդիր էր դարձել թուրքական երեք վարչակազմերի համար: Օսմանյան կայսրության գլուխ անցած երեք վարչակազմերն (համիդյան, երիտթուրքական և քեմալական) էլ հետևողականորեն վարում էին հայահալած քաղաքականություն: Հայաջինջ քաղաքականության հարցում դրանք քաղաքական շղթայի երեք օղակներն էին: Եվ եթե մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը թուրքերի գործողությունները որոշակիորեն կոծկվում էին, ապա պատերազմի սանձազերծումից հետո դրանք սկսեցին բացահայտ բնույթ կրել:

Փաստելով պատմական իրողությունները՝ վստահորեն կարող ենք ասել, 20-րդ դարի սկզբին համայն մարդկության աչքի առաջ տեղի ունեցավ հայերի ցեղասպանությունը: Այո, ցեղասպանություն և ոչ թե հայերի տեղահանություն ռազմական գոտուց, ինչպես որ փորձում են ներկայացնել թուրքերը: Եվ, այնուհանդերձ, թուրքական քարոզչամեքենան ամեն կերպ ջանում է խեղաթյուրել պատմա-

կան իրադարձությունները՝ ստելով ամբողջ աշխարհին և իր իսկ քաղաքացիներին՝ հայտարարելով, թե տեղի է ունեցել ոչ թե հայերի, այլ մահմեդականների մասսայական կոտորած՝ կազմակերպված հայերի կողմից, որին իբրև զոհ են գնացել շուրջ 600 հազար թուրքեր: Ուստի, հայերիս գերխնդիրը պետք է դառնա հետևողական լինել աշխարհին իրական դեպքերը ներկայացնելու և ցեղասպանության ճանաչման հարցում:

Մեր օրերում՝ յուրաքանչյուր ժողովրդի ազգային անվտանգության պաշտպանության համատեքստում ցեղասպանության դատապարտման և Թուրքիայի կողմից դրա ճանաչման հարցը դարձել է ժամանակի հրամայական, քանի որ աշխարհի և ոչ մի ազգ ապահովագրված չէ մեկ այլ ազգի ոտնձգություններից, քանի դեռ դատապարտված չէ հայերի ցեղասպանությունը: Այստեղ տեղին են Հիտլերի ամենահավատարիմ գործընկերներից մեկի՝ Ալբերտ Շպեերի խոսքերը, որում ասվում է, որ «Առաջին համաշխարհային պատերազմի հանցագործները խուսափեցին պատժից, թեև եթե Առաջին համաշխարհային պատերազմից հետո Դաշնակիցները հետևողականորեն իրագործեին դատավարությունը, ինչպես սպառնում էին, ապա հաջորդ սերնդի քաղաքական ղեկավարներին դա պատասխանատվության զգացում կներշնչեր»: Հիրավի, 20-րդ դարի իրար հաջորդող քառասունութ մեծ և փոքր ցեղասպանությունները նզովյալ վկայությունն են այն գնի, որ իրար հաջորդող ոճրագործներին է վճարում անտարբեր աշխարհը, որը բեռնված է կործանարար անգիտությամբ: Եվ վատահորեն կարող ենք ասել, որ եթե ժամանակին դատապարտված լինեին ոճրագործները, ապա պատմության էջերում չէր գրվի հրեաների ողջակիզման, սունգաիթյան ջարդերի և նման այլ իրադարձությունների մասին:

Հայոց ցեղասպանությունը, անշուշտ, դեր է խաղացել ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության նախազգուշացման և պատժի մասին» կոնվենցիայի ընդունման գործընթացում: Ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը ժամկետ չի ճանաչում:

2009 թվականի հոկտեմբերից հայ-թուրքական հարաբերությունները թևակոխեցին մի նոր փուլ, որը ըստ էության, պետք է ենթադրեր Թուրքիայի կողմից ցեղասպանության գործընթացում որոշակի տեղաշարժեր, քանզի անհնար է հաստատել բարիդրացիական հարաբերություններ մի պետության հետ, որի նախնիները իրա-

կանացրել են մասայական կոտորածներ տվյալ ժողովրդի նկատմամբ: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում ցեղասպանության խնդիրը չի կարող դառնալ առևտրի կամ շահարկումների առարկա:

Զնայած Եվրամիության դռները «ջարդող» և նրան անդամակցել փորձող պաշտոնական Թուրքիան այսօր էլ ջանքեր է գործադրում «գիտականորեն քննեցնել» հայերի ցեղասպանության փաստը և հսկայական գումարներ վատնում թուրքերի լոբբիի վրա, սակայն Չայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է: Եվ այսօր աշխարհի երկու տասնյակից ավելի երկրների օրենսդիր մարմիններն իրար հետևից ընդունում են հայերի ցեղասպանությունը դատապարտող օրինագծեր ու բանաձևեր: Այսպես՝ 2010 թվականի մարտի 4-ին ԱՄՆ-ի կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը և Շվեդիայի խորհրդարանը ընդունեցին հայերի ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր, որոնց հաջորդեց թուրքական մշտական հիստերիան, որն արտահայտվեց Թուրքիայի դեսպանի հետևանքամբ և այս իրավիճակը հասավ ապսուրդի, երբ Թուրքիայի վարչապետը հայտարարեց Թուրքիայի տարածքից շուրջ 100.000 հայերի արտաքսման մասին: Եվ այս հայտարարությունը աղաղակով վկայություն է այն մասին, որ մեր օրերում ցեղասպանության ընդունումն ու դատապարտումը ժամանակի հրամայական է:

Ողջ գիտակից մարդկությունը լիահույս է, որ մի օր Թուրքիան կընդունի իր նախնիների գործած հանցանքը և ներողություն կխնդրի հայ ժողովրդից: Այո, հանցագործները վաղ թե ուշ պետք է պատժվեն, քանզի ինչպես նշել է Ցիցերոնը. «Հանցագործության մեծագույն խրախուսանքը անպատժելիությունն է»:

**ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*ԵՊՅ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, ուսաանողուհի  
էլ.փոստ՝ margaryanlilit09@gmail.com*

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՆ-Ը**

Յայսօր շատ է գրվել և խոսվել 20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ Հայոց Մեծ Եղեռնի մասին: Տարբեր երկրների արխիվներից հավաքվել և պահպանվել են արժեքավոր փաստաթղթեր, ստեղծվել է պատկառելի ծավալով տարալեզու գրականություն, պատմություն, որոնք թղթին են հանձնել դեպքերին ժամանակակից պատմաբաններ, հասարակական գործիչներ, զանգվածային տեղահանությանը և կոտորածին հաղորդակից օտարերկրյա քաղաքական, ռազմական, դիվանագիտական, կրոնական և մշակութային գործիչներ:

• Ի՞նչ դեր է խաղացել ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանության իրողության մեջ, ինչ՞ու՞ ԱՄՆ-ը, որն իրեն հռչակել է մարդու իրավունքների անխախտելիության սկզբունքի վրա հիմնված պետություն և ողջ աշխարհում մարդու իրավունքների առաջատար պաշտպան, մինչ այսօր շարունակում է Ժխտողական քաղաքականություն. չէ՞ որ ժամանակակից աշխարհում ցեղասպանությունը դիտարկվում է հենց մարդու իրավունքների առումով, և ցեղասպանության անցյալի դեպքերի ճանաչումն ու դատապարտումը կարևորվում են ապագայում մարդկությանը նմանատիպ հանցագործություններից ձերբազատելու համատեքստում: «Եղեռն անտեսելը ծնում է նոր եղեռն»,- համոզված են ցեղասպանագետները: Ասածի ամենախոսուն վկայությունն է հանդիսանում նացիստական Գերմանիայի կանցլեր Ադոլֆ Հիտլերի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելուց մեկ շաբաթ առաջ ասված հայտնի խոսքերը. «...անխնա կոտորել հրեական ռասայի բոլոր մարդկանց՝ տղամարդ, կին, երեխա.....Ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին...»:

• Թուրքական լոբբիստական կառույցները 1915 թվականի հայերի ցեղասպանությունը Ժխտող ագիտացիոն ակտիվ քաղաքա-

կանություն են տանում հատկապես ԱՄՆ-ում: ԱՄՆ-ի կառավարությունը, դիվանագիտական ապարատը, սկսած դեռևս 1915 թվականից, առանցքային մասնակցություն էր ունեցել Հայոց Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման գործընթացում:

- Ամերիկյան ազգային արխիվների բազմաթիվ փաստաթղթերի բովանդակությունը լիովին հաստատում է, որ Օսմանյան կայսրության կառավարությունը վարել է հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականություն: Այդպես Հայոց Ցեղասպանության պատմության գիտական ու անաչառ լուսաբանման առումով դժվար է գերազնահատել և հատուկ չարժևորել 1913-1916 թվականներին Թուրքիայում ԱՄՆ դեսպան Չենրի Մորգենթաուի քաղաքական-հրապարակախոսական մեծարժեք մեմագրության մշակությունը, որի հայերեն թարգմանությունը լույս տեսավ Կ. Պոլսում դեռևս 1919 թվականին (1919 թ. Կ. Պոլիս, թարգմանությունը Ենովք Արմենի): ԱՄՆ-ի դեսպանի ձեռքով գրված սույն գիրքը ելակետային դարձավ մի շարք հայ և օտար պատմաբանների կողմից հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար: Գրքի կարևորագույն արժեքներից մեկը նրա փաստավավերագրական հավաստիությունն է և հեղինակի՝ մինչև վերջ անկեղծ, անաչառ և անկողմնակալ մնալու անուրանալի փաստը:

- Թուրքիայի կառավարության վայրագություններին ականատես ԱՄՆ դեսպան Մորգենթաուի խոսքերը փաստացի վկայում և հաստատում են 1915 թվականի ողբերգական անցքերը 20-րդ դարի տերմինաբանությամբ կոչվում է ցեղասպանություն:

Ամերիկացի որոշ քաղաքագետներ (Մ. Գյունտեր և Ու. Հոուի) 1915-1922 թթ. իրադարձությունները լուսաբանելու մեջ զեղծարարությունների են դիմում: Մ. Գյունտերն իր հողվածում գրում է. «19-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունների ինքնավարության բացառիկ համակարգը հայերին այնքան էր գոհացնում, որ թուրքերը նրանց անվանում էին «լոյալ» ազգ: 19-րդ դարի կեսերին իրադրությունը սկսեց փոխվել: Քրիստոնյա տարբեր ազգեր Արևմուտքում սկսեցին անջատվել կայսրությունից: Արևելքում Ռուսաստանը նվաճեց Կովկասը, և Թուրքիայի հետ ունեցած սահմանի վրա Ռուսահայաստանի գոյությունը հանդիսացավ ևս մի մղիչ ուժ ...Թուրքերի համար հայերի ինքնավարությունը սպառնալիք էր ներկայացնում կայսրության գոյությանը»: Փաստորեն աղավաղելով, Արևմուտքի որոշ քաղաքա-

գետներ ձգտում են կեղծել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բնույթը, բորբոքել ռուսատյաց տրամադրություններ: Գյուևտերը պնդում է, որ Հայերի ցեղասպանությունը իրականացվել է որպես պատասխան այն օգնության, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքահայերը դրսևորել են ռուսական բանակի ներխուժման համար: Կարծիք է ստեղծվում, թե այս քաղաքագետը աչքի ծայրով իսկ չի տեսել Մորգենթաուի մենագրությունը:

- 2008 թվականի հունիսի 4-ին ցեղասպանության և միջազգային իրավունքի համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետ Ուիլյամ Ա. Շաբաշը հայտնաբերել է մի փաստաթուղթ, որտեղ նշված է, որ 57 տարի առաջ ԱՄՆ կառավարությունը (ի դեմս նախագահ Տրումենի) պաշտոնապես ճանաչել է հայոց ցեղասպանությունը մի փաստաթղթով, որը ներկայացվել էր Արդարադատության Միջազգային Դատարան: Վերոնշյալ փաստաթուղթը ընդգրկված է Արդարադատության Միջազգային Դատարանի 1951 թվականի մայիսի 28-ի «Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժի վերաբերյալ կոնվենցիային ուղղված վերապահում» վերնագիրը կրող գեկույցում:

- Ցեղասպանագետները, հայոց ցեղասպանության ճանաչման հետ այս կամ այն կերպ առնչող քաղաքագետները և դիվանագետները լավատես են. նրանց մեջ իշխում է այն կարծիքը, որ ԱՄՆ-ը հայոց ցեղասպանության փաստը դե յուրե կճանաչի հենց իշխող վարչակազմի ժամանակ: Այդպես մտածելու համար մենք ունենք լուրջ հիմքեր.

- 1) հայ լոբբիստական կառույցների, ԱՄՆ-ի հայ համայնքի շնորհիվ ամերիկայի ավելի քան 40 նահանգ (այդ թվում և ԱՄՆ ներկա նախագահի ծննդավայրը` Հավայա նահանգը) ընդունել են հայոց ցեղասպանությունը:

- 2) ի տարբերություն նախկին վարչակազմերի` ներկա վարչակազմում հայերն ունեն լուրջ առավելություններ.

- ա) և` նախագահ Բարաք Օբաման, և` փոխնախագահ Ջոու Բայդենը հետևողականորեն պաշտպանել են հայկական հարցերը, այդ թվում և 1915 թվականի դեպքերը գնահատել են որպես ցեղասպանություն:

- բ) Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին ևս հայտնի է հայերին և Հայաստանին առնչվող հարցերում իր բարյացակամ դիրքորոշմամբ:

Թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Թուրքիան գիտակցում են, որ վաղ թե ուշ Ամերիկան ստիպված է լինելու ընդունել, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունները, ըստ 1948 թվականի դեկտեմբերի 12-ին Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) կողմից ընդունված կոնվենցիայի, կոչվում է ցեղասպանություն:

**ԱՐՇԱԿ ՎԱՅՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ**  
ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության  
ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ՝ Arshak-9191@mail.ru

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտ-թուրքական կառավարության կազմակերպած և իրագործած հայոց ցեղասպանության լուսաբանման արդիական նշանակությունը կապված է նաև թուրքական կողմի այն դիրքորոշման հետ, որի նպատակն է ժխտել Թուրքիայում կատարված հայ բնակչության բնաջնջման փաստը:

Արդի թուրքական գործիչները, պատմաբաններն ու քաղաքագետները դիմում են սովորաբար այն «փաստարկմանը», որ իբր հայկական ջարդերի մասին անգլիական, ֆրանսիական, ռուսական աղբյուրները միտումնավոր են, քանի որ դրանք Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի թշնամի պետություններն են: Այս առումով խիստ կարևոր են Թուրքիայի դաշնակից Գերմանիայի դիվանագետների վկայությունները, որոնք ցայսօր պահպանվում են Կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվներում:

Մենք չափազանց բարձր ենք գնահատում այնպիսի փաստաթղթերի բովանդակության զեկուցումը, որոնք լուսաբանում են Թուրքիայի կողմից հայերի տեղահանությունը, տեղահանությանն ուղեկցող սովը և համաճարակները, ինչպես նաև բռնությունների և հայկական ջարդերի մասին վկայությունները:

Հատկանշական է, որ այս տեղեկությունները բացառապես գերմանական դիվանագետների վկայություններ են, որոնք արդեն իսկ ի չիք են դարձնում թուրքական պատմագիտության մեջ տարածված տեսակետներն այն մասին, թե հայոց ջարդերը լուսաբանող անգլիական, ֆրանսիական, ռուսական աղբյուրները զրպարտանք են

թշնամի պետությունների կողմից: Այս առումով անմախադեպ են Էրզրումի գերմանացի հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերի զեկուցումները, որոնցից մեկի մեջ նա վկայություններ է տալիս թուրքական կառավարության Պանթուրքական ծրագրի մասին և հաղորդում գերմանական կառավարությանը, որ հայերի ապստամբությունների մասին տեղեկությունները ապատեղեկատվություն են, և որ հայերի ջարդերը հետապնդում են մի նպատակ՝ հայերից մաքրել Արևելյան Անատոլիան ու ճանապարհ հարթել պանթուրքական ծրագրի իրականացման համար:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Էրզրումի հայ կաթոլիկների առաջնորդ Հովսեփ եպիսկոպոս Մելքիսեդեկյանի դիմումը գերմանական հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերին գերմանացի հոգևորական Կյունցլերի նամակը Հալեպի հյուպատոս Ռյուսլերին՝ Ռւրֆայի և նրա շրջակայքի իրադարձությունների մասին:

Ուշագրավ են նաև, մեր կողմից, ներկայացվող, Բեռլինի միսիոներական ընկերության դիրեկտոր Կառլ Աքսենֆելդի դիմումը գերմանական կառավարությանը՝ հայերին ոչնչացումից ու իսլամացումից փրկելու միջոցառումների մասին, ինչպես նաև Էրզրումի հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերի նամակը Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին՝ հայկական հարցում իր դիրքորոշման մասին, և այլ վկայություններ:

Այսպիսով, մեր ուսումնասիրության առարկայի նպատակն է ներկայացնել գերմանական դիվանագետների վկայությունները, նրանց վերաբերմունքը Թուրքիայի կատարած ոճրագործություններին, և վերջապես այնպիսի արժեքավոր աղբյուրներ, ինչպիսիք են՝ Հալեպի հյուպատոս Ռյուսլերի, Էրզրումի հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերի զեկուցագրերը:

**ՎԱՐԵ ԱՐԱՅԻԿԻ ՄՈՍԻՆՅԱՆ**

*ՀԴՄՀ, Պատմության և իրավագիտության  
ֆակուլտետ, ուսանող*

**ՄԵԾ ԵՂԵՆՆԻ ՀԱՆՑԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ  
ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

Այս տարի լրանում է Մեծ Եղեռնի 95-ամյակը: Այս փաստը պետք է նորովի ոգևորի և պայքարի մղի հայությանը, քանի որ դեռևս թուրքիան չի ճանաչել իր կողմից գործած մեծ ոճիրը: Հարկ ենք համարում նշել, որ Մեծ Եղեռնը մեծ հետք է թողել հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա: Մեծ Եղեռնի հետևանք է հանդիսանում նաև այն, որ այսօր հայ ժողովրդի միլիոնավոր զավակներ սփռված են ամբողջ աշխարհով մեկ: Չի կարելի ամտեսել նաև այն հանգամանքը, որ Մեծ Եղեռնը մեծ հետք է թողել ցեղասպանությունից նազապուրծ հայ ժողովրդի սերունդների վրա և հոգեբանական բարդությունների առաջացման պատճառ է դարձել: Սակայն այս ուսումնասիրության մեջ մենք չենք անդրադառնա այս խնդիրներին:

Հայոց Մեծ Եղեռնի պատմության լուսաբանմանը և մանրամասնությունների բացահայտմանն իրենց ողջ կյանքն են նվիրաբերել մի շարք խոշորագույն ցեղասպանագետներ: Դրանց թվին է պատկանում նաև աշխարհահռչակ ցեղասպանագետ, պրոֆեսոր Վահագն Տատրյանը: Վահագն Տատրյանը հեղինակ է տասնյակ աշխատությունների և գիտական հոդվածների, որոնց մեջ հատկապես աչքի է ընկնում «Հայոց ցեղասպանության պատմություն» մեծարժեք և ստվարածավալ մենագրությունը, որը 2007 թվականին լույս տեսավ Երևանի «Գլաժոր» համալսարանի կողմից՝ պրոֆեսոր Ժ. Դ. Ջահանգիրյանի հովանավորությամբ:

Այս զեկույցի մեջ մենք կներկայացնենք թուրքիայի ռազմական պարտությունից հետո արդարադատության իրականացման հարցերը, որոնց ներկայացմանը և լուսաբանմանն է նվիրված աշխատության յոթներորդ բաժինը:

Այսպիսով, զեկուցման մեջ Վահագն Տատրյանի մեկնաբանությամբ կներկայացվեն երիտթուրքական իշխանությունների հետագա ճակատագիրը և արդարադատության իրականացման հարցերը: Կփորձենք անաչառ և անկողմնակալ մեկնաբանել և ներկայացնել պրոֆեսոր Վահագն Տատրյանի առաջ քաշած մտքերը, գաղափարները, ներկայացված ահռելի քանակությամբ փաստական նյութը:

**ՏԱԹԵՎԻԿ ԴՆԵՐԻԿԻ ՍՈՒՐԱԴՅԱԼ**

ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ  
էլ. փոստ` [Tatul88-88@mail.ru](mailto:Tatul88-88@mail.ru)

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ**

Հանրահայտ է, որ թուրք ղեկավարները բացառիկ դիվանագետներ են: Բայց հենց, որ այդ դիվանագետները լսում են Հայոց ցեղասպանություն, Հունաստան, Կիպրոս կամ Քրդստան բառերը, նրանց «սառնասրտությունը» հոդս է ցնդում և դիմում են հուզական պոռթկումների ու ոչ դիվանագիտական քայլերի՝ վնասելով իրենց իսկ շահերը: Այս մասին են հենց վկայում վերջերս Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թաիփ Էրդողանի կատարած այն հռեռես և զգայական պոռթկում հանդիսացող Թուրքիայից ապօրինի բնակավող հայերին վտարելու մասին հայտարարությունները՝ վկայակոչելով նաև թուրքահայ համայնքի ներկայացուցիչների տված տվյալները: Գիտակցելով, որ այս տարի Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցն է, թուրքական իշխանությունները ջղաձգորեն նախապատրաստվում են ոգեկոչումների սպասվող տարափին, որը միջազգային հանրությանը մեկ անգամ ևս կհիշեցնի օսմանյան թուրքերի կողմից մարդկության դեմ իրագործած անմարդկային ոճրագործության մասին: Հայոց Ցեղասպանության հարցը մտել է քննարկման նաև Բուլղարիայի, Սերբիայի և Իսրայելի խորհրդարաններ: Ամեն անգամ, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչվում է որևէ երկրի կողմից, սարսափը պատում է թուրքական իշխանությանը, դրա գլխավոր պատճառն այն վախն է, որ նրանց պահանջ կներկայացվի հայկական կորուստները փոխհատուցելու և բռնազավթած հողերը ետ վերադարձնելու համար: Թուրք վարչապետը և նրա գործընկերները չեն հասկանում, որ Ցեղասպանության ճանաչումն ինքնին չի հանգեցնում իրավական պահանջի: Նրանք վախ ունեն, որ ցեղասպանության մասսայական ճանաչումը կարող է հանգեցնել իրավական պահանջների ձևակերպման՝ համաձայն մի-

ջազգային իրավական նորմերի: Էրդողանի կատարած այս հայտարարությունը թանկ է նստել նրա վրա նաև ներքաղաքական կյանքում, քանի որ Թուրքիայի աշխատանքի և սոցիալական հարցերով նախկին նախարար Յաշար Օքույանը պատրաստվում է հայց ներկայացնել ընդդեմ Էրդողանի, քանի որ նրա հնչեցրած այդ հայտարարություններն իրավական տեսանկյունից հանցանքի խոստովանություն են: Անգամ տեղի է ունեցել բողոքի ցույց, որտեղ վարչապետին նաև ռասիստ են անվանել: Հուզական անհավասարակշռության և ժխտողականության ևս մեկ օրինակ է նաև վերջերս հաքերային հարձակման ենթարկված Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի պաշտոնական կայքէջը (armnoc.am): Արարքն իրականացնողները ներկայացել են որպես թուրք հաքերներ և գրությամբ հասկացրել են, որ դա արվել է ի նշան ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովի կողմից Հ.Ց. ճանաչման բանաձևի ընդունման դեմ բողոքի: Նշենք նաև, որ թուրքական ոչ բոլոր տեղեկատվական աղբյուրներում է, որ տիրում է նույն իրավիճակը: Օրինակ թուրքական «Milliyet», «Hurriyet», «Daily News», «Taraf» օրաթերթերը ակտիվորեն անդրադարձել են ստեղծված իրավիճակին և բազմիցս թե՛ թերթերը, թե՛ առանձին անհատներ քննադատել են Թուրքիային և որոշ քաղաքական գործիչների և մեղադրել ցեղասպանության մեջ: Մասնավորապես թուրք հայտնի լրագրող Ջան Դյունդարը, «Milliyet» օրաթերթում անդրադառնալով Հայոց ցեղասպանության փաստի միջազգայնացման գործընթացին, անում է հետևյալ հարցադրումը՝ «Մի՞թե հետ ենք կանչելու մեր բոլոր դեսպաններին»: Այնուհետև ավելացնում, որ «Թուրքիան նման է մի երեխայի, ով իր ընկերների կողմից մեկուսացման է դատապարտվում, երբ ի հայտ է գալիս իր հոր՝ անցյալում կատարած սպանությունը...Նա կարծես լուռ իր վրա է վերցնում հոր մեղքը, հետո էլ կոծկում այն: Սակայն զոհի հարազատները դա չեն մոռանում, դռնեդուռ են ընկնում և տեղեկացնում թաղամասի բնակիչներին: Ուզում են, որ բոլորն իմանան իրենց գլխին եկածը, հաշիվ են պահանջում: Թուրքիան նման է մի երեխայի, ով չի կարողանում ասել՝ Հանցագործը ես չեմ, այլ՝ հայրս: Ջղջացել եմ... Երանի չլիներ: Ես էլ եմ ցավում...: Հորն աջակցելու համար՝ ստանձնում է հին մեղքը: Հիմա էլ վճարում է դրա գինը: Մեկուսանում է»: Ջան Դյունդարը շատ հետաքրքիր և պատկերավոր նկարագրում է իր իսկ նախնիների գործած հանցանքն ընդունելու և դատապարտելու համար Թուրքիայի դեմ սկսված միջազգային արշավը՝

դա ներկայացնելով ներթադային հարաբերությունների օրինակով. «Թաղի մեծը՝ Ամերիկան, մեզ համար անսպասելի մի պահի թափահարեց տարիներով ձեռքում պահած մահակը...: Բոլոր թաղեցիները, տեսնելով, որ թաղի մեծի դիրքորոշումը փոխվել է, վերցնում են մահակներն ու գործի անցնում: Սկսում են նեղել երեխային՝ ասելով. «Ոչ թե մեկ, այլ մյուս սպանություններն էլ եք դուք գործել»: Դժվար չէ տեսնել, թե ինչ է լինելու այդ մեղադրանքներից հետո: Ըստ էության, 20 երկրների խորհրդարանների և բազմաթիվ միջազգային կառույցների ու կազմակերպությունների, ինչպես նաև մեծ համարում ունեցող անհատների կողմից Թուրքիան արդեն մեղադրվում է Ցեղասպանություն իրականացնելու համար...: Օղակը սեղմվում է, իսկ Թուրքիան՝ միայնակ գալարվում: Նրան պաշտպանող բարեկամներն անգամ չեն կարողանում ասել՝ չի արել: Փոխարենն առաջ են քաշում այն թեզը, թե՝ «Այդ երեխան մեզ համար կարևոր է, եկեք նրան շատ չհյուծենք»: Թուրք հողվածագիրը մշում է, որ եթե աշխարհում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը նման տեմպերով շարունակվի, մինչև Ցեղասպանության 100-րդ տարելիցն աշխարհի բոլոր երկրները կճանաչեն այդ փաստը: Ժամանակն է Արևմուտքում մեր բոլոր դեսպաններին հետ կանչելու փոխարեն անկեղծորեն քննարկենք 95 տարի առաջ տեղի ունեցած կեղտոտ գործը և պարզենք, թե այդ որտե՞ղ ենք սխալ գործել: Իսկ վերջերս Երևանում լրագրողների հետ հանդիպման ժամանակ Թուրքայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Ջեմ Թոքերը, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերություններին՝ մշեց, որ 700 տարի կողք-կողքի ապրած երկու ժողովուրդներն արժանի չեն այսօր ստեղծված իրավիճակին: Դրա համար, ըստ նրա, կարևոր է կոտրել առկա կարծրատիպերը և վերացնել թյուրըմբռնումը: Նա մշեց նաև, որ իր սերունդը մեծացել է՝ լսելով հայերի և Հայաստանի, Ցեղասպանությանը վերաբերող օրինագծերի մասին: Թուրք ժողովուրդն ավելի դրական է վերաբերվում Ադրբեջանին, քան Հայաստանին: «Ինչպես ձեր լոբբին է ուժեղ ԱՄՆ-ում, այնպես էլ ադրբեջանական լոբբին ուժեղ է Թ.-ում», - ընդգծեց նա: Թուրքական «Taraf» օրաթերթը ևս քննադատել է Հայոց ցեղասպանության փաստը ժխտելուն ուղղված թուրքական պետական քաղաքականությունը և Թուրքիայի վարչապետի՝ հայերին արտաքսելու մասին սպառնալիքը: Օրաթերթի ընթերցողներ Ջ. Մուրաթ Օզգյունայի, Օմեր Ֆարուքի, Դյուրրիյեթ Քարադենիզի, Եթեր Օզդեմիր Շահինի, Ադնան Գենչի,

Էրդալ Քարայազգանի, Սերեփ Քայայի, Նեսրին Ասլանի, Այլա Շաշանի, Ալի Շենալփըի, Մուհթեշեն Օզդամարի, Նեջմի Դեմիրջիի, Նեդիմ Արուլի ստորագրությամբ հրապարակված հայտարարության մեջ ասվում է հետևյալը. «Մենք անտարբեր չենք կարող մնալ 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Մեծ Եղեռմի նկատմամբ, մեր խիղճը չի ընդունում դրա ժխտումը: Մերժում ենք այդ անարդարությունը, վշտակցում մեր հայ եղբայրներին: Քննադատում ենք կարիքավոր հայերին պատանդ պահող վարչապետ Էրդողանի հայտարարությունը՝ այն համարելով անխղճություն»: Թուրքական որոշ լրատվամիջոցներ «Taraf»-ում հայտնված հայտարարությունը որակել են շոկային: Թուրք ժողովրդի 99.99 տոկոսը մտահոգված է Հայաստանի շրջափակմամբ: Սակայն, չնայած առաջին հայացքից արմատական փոփոխություններին, ինչպես ցույց են տալիս վերջին զարգացումները, թուրքական հասարակության մի հիմնական մասը, նաև՝ քաղաքական ղեկավարության մեծ մասը դեռևս պատրաստ չէ Ցեղասպանության փաստը ընդունելուն ու հրապարակավ ճանաչելուն, քանի որ, դա կնշանակի թուրքական պետության հիմքերի վտանգում և, ամենակարևորը, արմատական փոփոխություններ թուրքական հասարակության հասարակական գիտակցությունում, ինչ այս փուլում հնարավոր չէ: Ժամանակակից թուրքական հասարակության էթնիկ ինքնագիտակցությունը կայացել / կայացվել է Հայոց Ցեղասպանության ժխտման հիմքի վրա:

**ԹԱՄԱՐԱ ՆԵՆՍՈՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ**

ԵՊՅ, Հայ բանասիրության ֆակուլտետ, ուսանող  
tamara\_poghosyan@mail.ru

**ԱՆԿԵՂԾ ԶԻՆՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ՝  
«ԻՄ ՅՈՒՇԵՐԻՍ ՃԱՆԱՊԱՐՅՈՎ»**

Վան քաղաքում ծնված Երվանդ Կյուրեղյանը մանկուց ականատես է եղել թալան-կոտորածի, ջարդի, հայ ժողովրդի ամենածանր իրադարձություններին:

Այդ ամենը նրա մեջ ինքնապաշտպանության զգացում է ծնել: Նրա նմաններից քչերին է հաջողվել սերունդներին հանձնել պատմական ծանր ժամանակաշրջանում անձնական մաքառումներով ձեռք բերած փորձը:

Այսօր, երբ տեսնում ենք հայոց ցեղասպանությունը ժխտող թուրքական պետական քաղաքականությունը, վարժ ու անվարժ ձեռագրերով գրած հուշերն անգամ անժխտելի վկայություններ կարող են լինել:

Անկեղծ զինվորի հիշատակարանում խոսում են պատմական բազմաթիվ անցքեր ու խոշոր դեմքեր, ոսոխների դեմ արիաբար կանգնելու, զարկվելու ու հարվածելու հերոսական էջեր:

Գիրքն արժևորվում է նաև այն այն հանգամանքով, որ ազգագրական հարուստ նյութ է պարունակում գյուղացիների կենցաղի, ընտանեկան սովորույթների, աշխատանքի ու աշխատանքային երգերի մասին: Բայց կա ևս մեկ հետաքրքիր հանգամանք՝ գրքում կան տեղեկություններ նաև հայ-քրդական ու հայ-թուրքական հարաբերությունների մասին:

Վերլուծության են ենթարկվում հիշատակարանի հատկապես այն հատվածները, որոնք արտացոլում են պատմական կարևոր դեպքեր, որոնց ականատեսն է եղել Երվանդ Կյուրեղյանը, օրինակ՝ «Թահիր բեգի ատրճանակը», «Իզեն», «1915 թ. Գերծ գիւղի զենքերի ցուցակը», «Ձորահավաքը եւ Սուլէյմանը», «Ես՝ թուրքի զինվոր», «Ձենքերի առաքումը», «Գերծ գիւղի կռիվը 1915 թ.», «Յաղթանակի շքերթ», «Վերադարձ դեպի հայրենիք», «Բաեազիդի պաշարումը»,

«Արարատ դաշտի կռիվները», «Վրեժխնդիր քաջ սասունցիները», ինչպես նաև հատվածներ Սարդարապատի հերոսամարտի, Փետրվարյան ապստամբության մասին:

Վերը նշված հատվածներում ներկայացված տվյալները համեմատվում են այլ աղբյուրներից ծագող տվյալների հետ, որոշվում ընդհանուր և հակադիր եզրերը:

Քննվում են հեղինակի խոսքը, ոճը, հիշատակարանի շարադրանքը, սուբյեկտիվ մոտեցումը նշված դեպքերի հանդեպ: Խոսքի մեջ նկատելի են Վանի և Թավրիզի բարբառային տարրեր, ինչպես նաև Թեհրանի խոսվածքի ազդեցությունը: Գրել է առանց մեծատառերի, երբեմն տառերի շփոթով, ուղղագրական սխալներով և առանց կետադրության:

Ուշագրավ է ականատեսի մոտեցումն իր հուշերը ներկայացնելիս. նրա վկայած դեպքերը շնչում են իր իսկ հուզմունքով:

Հիշատակարանը շարադրել է հարյուր տարեկան հասակում, վերապրել է դեպքերը, օգտագործել մի շարք պատմական անուններ, անսխալ հիշել մեկ կամ երկու անգամ տեսած գետերի, աղբյուրների, վանքերի, եկեղեցիների անուններ, որոնք առաջին հայացքից գուցե բացատրության կարիք ունեն:

Նկարագրելով մի ամբողջ հարյուրամյակ՝ հիշատակում է բազմաթիվ հայտնի ու անհայտ մարդկանց, մոռացումից փրկում է շատերի անունը, նաև գործը:

Տրվում է «Իմ յուշերիս ճանապարհով» անկեղծ զինվորի հիշատակարանի պատմական և գրական արժեքը, ձեռք բերած տեղը պատմության և գրականության մեջ:

**ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐՄԵՆԻ ԴՈԴՈՍՅԱՆ**

*ԵՊՅ ԻՍ, Հունամիտար գիտությունների ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ՝ k-ris@mail.ru*

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հիրավի ողբերգական էր Հայոց ցեղասպանությունը, որը արյունոտ հետք դրոշմեց ոչ միայն Հայոց, այլև համամարդկային պատմության ընթացքի վրա:

Օսմանյան կառավարությունը սկսած 1870-ական թթ. վերջերից Արևմտյան Հայաստանում վարում էր դաժան քաղաքականություն, որի էությունն էր՝ «Հայաստանն առանց հայերի»: 19-րդ դարի 90-ական թթ. կեսերից օսմանյան կառավարությունն սկսում է արևմտահայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը և 1894-1896 թթ. հայկական կոտորածները այդ քաղաքականության ներածականն էին: 1894-1896 թթ. հայկական կոտորածներն Օսմանյան կայսրությունում համաշխարհային պատմության մեծագույն ողբերգություններից է, որոնք տեղի էին ունենում ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Թուրքիայի հայաբնակ վայրերում: Այս կոտորածներին զոհ գնացին շուրջ 300 հազար արևմտահայեր, շուրջ այդքանն էլ արտագաղթեցին Ասիայի ու Եվրոպայի մոտ ու հեռու երկրներ: 19-րդ դարի 90-ական թթ. զանգվածային կոտորածներից հետո ամայացան Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր, իսկ սուլթանական կառավարությունն էլ ավելի սաստկացրեց հայերի նկատմամբ ազգային ու կրոնական հալածանքները: Հայ ազատագրական շարժումները բնում խեղդելու համար Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերում ստեղծվեցին ամրացված զորանոցներ:

Համիդյան քաղաքականությունը շարունակվեց հաջորդ վարչակարգի՝ երիտթուրքերի կողմից, որոնք իշխանության էին եկել 1908 թ.: Երիտթուրքական վարչակարգի հաստատումը մեծ խանդավառությամբ ընդունվեց նաև արևմտահայերի շրջանում, որովհետև երիտթուրքերը հանդես էին գալիս ֆրանսիական Մեծ հեղափոխու-

թյան կարգախոսներով: Սակայն երիտթուրքերի դեմոկրատացված այս գործելաոճը երկար չձգվեց: Պատմական դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ համձինս երիտթուրքերի, իշխանության են եկել կոսմոպոլիտական շովինիստներ ու պանթուրքիստներ: Այդ քաղաքականության առաջին պտուղը եղավ 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած հայերի ջարդը, որին զոհ գնաց ավելի քան 30 հազար հայ:

1910-1911 թթ. երիտթուրքերը պաշտոնապես հրաժարվեցին պանօսմանիզմից և անցան պանթուրքիզմի, որը դարձավ կայսրության պետական գաղափարախոսությունը: 1911 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Սալոնիկում կայացած համագումարի որոշումները բախտորոշ եղան ոչ թուրք ժողովուրդների համար: Համագումարի որոշումներում կարևորվում էր հատկապես հայերի բնաջնջման ծրագիրը, որի լուծմամբ պետք է լուծվեին հետևյալ խնդիրները. 1. միանգամից վերջ կտրվեր հայկական հարցին, 2. երկիրը կազատվեր հայկական տարրից, ամբողջ Արևմտյան Հայաստանը կդառնար թուրքերով բնակեցված միատարր տարածք, 3. հայերի նյութական հարստությունները կանցնեին թուրքական պետությանը, 4. «ամենամեծ խոչընդոտի» վերացմամբ՝ ճանապարհ կհարթվեր մեծ նպատակի՝ պանթուրքիզմի իրագործման համար: Մասնավորապես երիտթուրքական պարագլուխներից դոկտոր Նազըմն ասաց. «Այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական հարցի արմատական լուծումն է... Պետք է բնաջնջել հայերին մեր կայսրության մեջ»:

Պաշտոնապես ընդունելով պանթուրքիզմի գաղափարախոսությունը՝ երիտթուրքերը նպաստավոր պահի էին սպասում այդ գաղափարախոսության իրականացման համար: Այդպիսի նպաստավոր պահ հանդիսացավ Առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան կայսրությունը ընդգծված նպատակաուղղվածությամբ ներքաշվեց համաշխարհային պատերազմի մեջ՝ ստեղծել թուրքական մեծ կայսերապետություն, որի սահմանները պետք է ձգվեին Ջիբրաթարից մինչև Հինաստան, որի մեջ ընդգրկվելու էին Կովկասը, Ղրիմը, Մերձվոլգյան հողերը, Միջին Ասիան, ինչպես նաև Իրանի, Հինաստանի, Հնդկաստանի թուրքաբնակ շրջանները:

Ահա երիտթուրքերն իրենց նպատակների իրականացման ճանապարհին՝ որպես մեծ խոչընդոտ ընկալում էին հայերին, որոնք սեպի նման խրված էին այսպես կոչված «իսլամական համատարած

գոտու մեջ», ունեին ռուսական կողմնորոշում և խանգարում էին իրենց համաթուրանական նկրտումների իրականացմանը, որը Հայկական հարցը դարձրել էր Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս և միջազգային դիվանագիտության առարկա: «Հայերը միակ արգելքն են մեր քաղաքականության հաջողության համար, քաղաքականություն, որ պետք է բանա Հնդկաստան տանող ճանապարհը: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին և նրանց դիակների վրայով քայլելով հասնել մեր նպատակին...», - ահա այսպես էր գրված «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտկոմի՝ իր տեղական կազմակերպություններին ուղղված շրջաբերականում:

Երիտթուրքերը համաշխարհային պատերազմը լավագույն առիթը համարեցին իրենց ծրագրերի իրականացման համար: Նախ՝ նրանք հավատացած էին պատերազմում Ռուսաստանի պարտության մեջ, երկրորդ՝ պատերազմն ինքնին հետին պլան էր մղելու ցեղասպան ծրագրի իրագործմանը խանգարող բարոյական արգելքները: Ահա թե ինչպես էր դա հիմնավորում դոկտոր Նազըմը. «...Հիմա պատերազմ է, այդպիսի առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով էլ հարցը կփակվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ կրեն: ...Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրի ու լիակատար տեր ու տնօրեն լինի թուրքն ու միայն թուրքը: ...Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից: Կրոնն ինձ համար իմաստ ու նշանակություն չունի: Իմ կրոնը թուրանն է»:

Երիտթուրքերի գաղտնի խորհրդաժողովում բոլոր ներկա գտնվողները քվեարկեցին հայերի բնաջնջման օգտին: Թալեաթի առաջարկությամբ քվեները հավաքեցին ու հաշվեցին. բոլորը միաձայն քվեարկել էին մինչև վերջին հային բնաջնջելու օգտին:

Արևմտահայերի զանգվածային ջարդի ու տարագրության կատարումը հանձնարարվեց 3 հոգուց բաղկացած հանձնախմբին՝ անդամակցությամբ դոկտոր Նազըմի, դոկտոր Բեհաեդդին Շաքիրի և լուսավորության նախարար Միդհատ Շյուքրիի: Երիտթուրքական գործիչներից Մելան Ջադե Ռիֆաթը, որն իր գրքում բացահայտել է ցեղասպանությունը պետականորեն կազմակերպված լինելու մանրամասները, նշում է, որ երեքի կոմիտեն անկախ, ոչ պաշտոնական, անպատասխանատու գործադիր մարմին էր: Այն պետություն էր պե-

տության մեջ, ուներ իր գրասենյակը, պաշտոնությունը. իր որոշմամբ կոմիտեն բանտերից հավաքագրում էր քրեական հանցագործների և ստեղծում «Չեթե» կոչվող հրոսակախմբերը: Այսպիսով Չայոց ցեղասպանությունը կանխամտածված և ամենայն բժախնդրությամբ նախապես ծրագրավորված էր երիտթուրքական վարչակարգի կողմից:

1915 թ. ապրիլի 15-ին հաստատվեց ու տեղական իշխանություններին ուղարկվեց արևմտահայության մահվան հրամանը, որը ստորագրված էր Թալեաթի, Էնվերի ու Նազըմի կողմից: Դրանում մասնավորապես ասված էր. «Ամեն մի պաշտոնատար կամ մասնավոր անձնավորություն, որը կընդդիմանա այս սրբազան ու հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

Սա մի ողջ ժողովրդի դամբանականն էր:

**ԱՂՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԺՆՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Ավանդաբար համարվում է, որ Հայաստանի ու հայության դեմ սանձազերծված տեղեկատվական-հոգեբանական պատերազմում Թուրքիան խնդիր ունի միայն ժխտելու Հայոց ցեղասպանության իրողությունը: Սա, սակայն, հարցին պարզունակ մոտեցման արդյունք է: Թուրքական ժխտողականությունը վերաբերում է ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև հայոց ամբողջ պատմության ժխտմանն ու այլափոխմանը: Թուրքիան ժխտողականության պետական տեղեկատվական քաղաքականությունն իրականացնում է ոչ միայն իր սեփական ռեսուրսներն օգտագործելով. քարոզչական այդ արշավի մեջ նա գործում է «փոքր եղբոր»՝ Աղրբեջանի գործակցությամբ՝ կանոնակարգելով և ուղղորդելով վերջինիս հակահայկական, մասնավորապես՝ ժխտողական տեղեկատվական քաղաքականությունը:

Բնական է, որ պետական քարոզչական ապարատին սերտաճած լրատվամիջոցներն այս երկրում պետք է իմտենսիվորեն զբաղվեն ժխտողական տեղեկատվական քաղաքականությամբ: Աղրբեջանական լրատվամիջոցները, ի թիվս բազում այլ տեղեկատվական գործողությունների տեխնոլոգիաների, առատորեն կիրառում են այսպես կոչված պատմության վերագրառման մեթոդը: Այս գործոնն օգտագործվում է ապագա սերնդի ձևավորման և ցանկալի գաղափարախոսության սերմանման նպատակով: Պատմության զեղծարարության վառ օրինակն այսպես կոչված Խոջալուի ցեղասպանության մասին անընդհատ հիշատակումներն են, ինչը «պատեհ» առիթ է Հայոց ցեղասպանությանը հակադարձելու և դրանով իսկ այն ժխտելու համար:

Հենվելով թուրքական ավանդույթների վրա՝ աղրբեջանական տեղեկատվական գործողություններում հերքվում է Հայոց ցեղա-

սպանությունը և շրջանառության մեջ դրվում «համաշխարհային պատերազմի տարիներին հայ հրոսակախմբերի կողմից 2 մլն ամմեղ թուրքերի սպանության» հորինված տեսակետը: Ադրբեջանցիների կողմից այս թեմայի շրջանառումը հետապնդում է թուրքական մերժողական քարոզչության աջակցության և հայկական կողմից տրամադրվող տեղեկությունների արժանահավատության նկատմամբ կասկածների տարածման նպատակներ: Սակայն, ինչն առավել կարևոր է ադրբեջանական քարոզչամեքենայի համար, այն այդպես փորձում է հասնել հայոց ամբողջական պատմության ժխտմանը՝ տարածքային պահանջներ ներկայացնելով նաև Արցախի և Սյունիքի նկատմամբ:

Հայոց ցեղասպանության ադրբեջանական ժխտողականության բաղկացուցիչ մասն է ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ այդ երկրի վարած պայքարը: Այս հարցում ևս Ադրբեջանը թուրքիայի կողքին է. այն երկրների դեմ, որոնք ցեղասպանության ճանաչման հարցն են սկսում արժարժել, Ադրբեջանը թուրքիայի նմանողությամբ դիվանագիտական դեմարշի քաղաքականություն է որդեգրում: Այնուհայտ օրինակ է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից 2010 թ. մարտին ընդունված Հայոց ցեղասպանության բանաձևին ադրբեջանական արձագանքը: Ադրբեջանի խորհրդարանն անմիջապես ընդունեց ԱՄՆ Կոնգրեսին ուղղված հատուկ դիմում, որում ակտուսանք է հայտնում հանձնաժողովի կողմից Ցեղասպանության ճանաչման փաստի առնչությամբ:

Հայամետ կամ հայկական աղբյուրների վարկաբեկման և ապալեզդիտիմացման հարցում ադրբեջանցիները կրկին կիրառում են թուրքական հայտնի մեթոդաբանությունը, որի ամենավառ օրինակն է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի պատմավեպի արժեզրկումը: Այդ նպատակով թուրքերը դեռևս 1989 թ.՝ Հայոց ցեղասպանության 75-ամյակի նախաշեմին, ստեղծել են ինֆոլոգեն, համաձայն որի՝ Վերֆելն իբր կյանքի վերջին տարիներին «բացահայտել է, որ իր ստեղծագործությունը պատմական հիմքեր չունի»:

Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական առավել հաճախակի հարձակումների շարքում աչքի զարնող են ոչ միայն 1915 թ. Հայոց ցեղասպանության հերքումն ու հանցանքի պրոյեկտումը, այլև 20-րդ դարի ընթացքում «ադրբեջանցիների ցեղասպանու-

թյուն» իրականացնելու մեջ հայկական կողմին ուղղված մեղադրանքները: Ընդ որում, ադրբեջանական քարոզչամեքենայի վառ երևակայության արդյունքում հայության կողմից «թշվառ ու խեղճ» ադրբեջանցիները ցեղասպանության են ենթարկվել առնվազն երեք անգամ: Առաջին, 1918 թ.-ին՝ Բաքվի կոմունայի և մահմեդականների միջև տեղի ունեցած բախումների ընթացքում, իբր հայերի կողմից «ադրբեջանցիների ցեղասպանության» «հանցագործ պլան» է իրագործվել, երկրորդ՝ 1990 թ. Բաքվում խորհրդային բանակի գործողությունների արդյունքում զոհված ադրբեջանցիներն իբր հայկական սադրանքների զոհեր են դարձել, և, վերջապես, երրորդ՝ 1992 թ. Խոջալուի դեպքերն իբր հայկական զինվորականության կողմից միտումնավոր սպանություն, և ուրեմն «ցեղասպանություն» են եղել:

Հանգամանորեն ուսումնասիրելով Ադրբեջանի քարոզչական դերը Հայոց ցեղասպանության ժխտողականության հարցում՝ պարզ է դառնում, որ Ադրբեջանը, բացի «մեծ եղբորը» ցուցաբերվող տեղեկատվական օգնությունից, լուծում է նաև սեփական խնդիրները՝ պարարտ հող է ստեղծում հայերի՝ իրենց հողի վրա եկվոր, ոչ բնիկ լինելու մտացածին թեզը պնդելու, և հետևաբար, «Արևմտյան Ադրբեջան» ինֆոլոգեմի տակ ոչ միայն Արցախի, այլև Սյունիքի և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի նկատմամբ պահանջներ ներկայացնելու համար:

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՀՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՆԵԹԱՑԸ**

Ցեղասպանության ճանաչումն ինքնին ցեղասպանության դեմ պայքարի մի հիմնավոր միջոց է, որը մարդու ապահով գոյատևման իրավունքի հաստատումն է:

Միջազգային հանրությունն արդեն 1915 թ. կեսերին քաջատեղյակ էր հայոց ցեղասպանության մասին: 1915 թ. մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի կառավարությունները միացյալ հանդես եկան հրապարակային նախազգուշացմամբ ուղղված Թուրքիայի կառավարությանը: Այդ հայտարարությունն այսօր կարելի է համարել հայոց ցեղասպանության դատապարտման առաջին միջազգային փաստաթուղթը, որը հրապարակվելով աշխարհի գրեթե բոլոր երկրներում՝ ազդարարեց.

«Հայաստանում տեղի են ունեցել կոտորածներ՝ քրդերի և թուրքերի կողմից, Օսմանյան իշխանության բացահայտ թողտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ»:

Առաջին անգամ միջազգային ասպարեզում 3 խոշոր տերություններ հայերի դեմ կատարված ոճրագործությունը որակեցին որպես մարդկության և քաղաքակրթության դեմ կատարած նոր հանցագործություններ, որոնց համար «...անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»: Այս հայտարարությունը 33 տարի անց իր արտահայտությունը գտավ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի կողմից ցեղասպանությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիայում:

1965 թ. Հայոց Ցեղասպանության հիսնամյա տարելիցի լայնամասշտաբ նշումը սփյուռքահայ համայնքներում և հայրենիքում խթան հանդիսացավ ցեղասպանության դատապարտման ու նրա

պաշտոնական ճանաչման համար աշխարհի առաջավոր ուժերի համախմբման գործում:

1965 թ. ապրիլի 20-ին Ուրուգվայի Ազգային համագումարը հայոց ցեղասպանությունը դատապարտելու իր որոշմամբ դարձավ աշխարհի առաջին երկիրը:

Երկրորդ հզոր ծայնը, որը հիշեցրեց հայերի ցեղասպանության մասին, հնչեց 1968 թ., 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսում:

1984 թ. ապրիլի 13-16-ը Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, որը քննարկեց հայոց ցեղասպանության հարցը: Ընդունվեց ցեղասպանությունը դատապարտող որոշում:

1980 թ. Կանադայի Քվեբեկի նահանգի Ազգային համագումարը և Օնտարիո նահանգի խորհրդարանը որոշում կայացրեցին հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին և դիմեցին Կանադայի խորհրդարանին՝ պաշտպանել այն: Առաջարկը պաշտպանություն չգտավ:

1985 թ. ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհուրդը հատուկ բանաձև ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»՝ պարտադրելով Թուրքիայի կառավարությանը ճանաչել հայոց ցեղասպանությունը:

1988 թ. նոյեմբերի 22-ին Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին»: Ընդունված օրենքն ապրիլի 24-ը հայտարարեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

1990 թ. ապրիլի 19-ին Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու վերաբերյալ:

1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման ընդունեց հայտարարություն «1915-1922 թթ. Հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

2000 թ. նոյեմբերի 10-ին Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Բ-ն ճանաչեց Հայոց Ցեղասպանությունը: Պապի և Հայոց կաթողիկոս

Գարեգին Բ-ի համատեղ հայտարարության մեջ առաջին անգամ նշվեց ցեղասպանություն բառը:

Այսօրվա դրությամբ Մեծ Եղեռնը ճանաչել և դատապարտել են աշխարհի ավելի քան 200 պետություններից 18-ը (գումարած Եվրամիությունը):

Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումն ինքնին նվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական անհաշիվ կորուստների դիմաց: Որպես առաջին, հիմնական պարտականություն, Թուրքիայի Հանրապետությունը չպետք է ձգտի կոծկել ու նեմգափոխել ցեղասպանության իրողությունը, այլ համարձակություն հանդես բերի ընդունելու և հաշվի նստելու փաստերի հետ:

Միջազգային իրավունքը ցեղասպանության հանցագործության կատարման հետ կապում է նաև նյութական պատասխանատվության կրումը որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության այլ իրավունքների վերականգնում, ինչպես նաև ֆիզիկական անձանց, այնպես էլ ամբողջ ազգային խմբին պատճառած վնասների և կորուստների փոխհատուցում: Ցեղասպանության համար նյութական պատասխանատվության իրավական իմաստն այն է, որ բռնի գրկմամբ պայմաններ են ստեղծվում խմբի քայքայման համար, ինչը և հանդիսանում է ցեղասպանության հանցակազմ, ուստի հակազդումն այդ հանցանքին ենթադրում է նախ՝ խախտված իրավունքների վերականգնում, ապա համապատասխան պատժամիջոցների կիրառում հանցանքը գործողների դեմ: Բոլորը, ովքեր մասնակցել են այդ գործողություններին ենթակա են տնտեսական պատժամիջոցի գործողությանը: Ցեղասպանության հետևանքով հասցված նյութական վնասների հատուցման հարցը շատ ավելի վաղ է ծագել, սակայն մի շարք պատճառներով չի լուծվել: Այսօր նույնիսկ դժվար է պատկերացնել հարկ եղած փոխհատուցման ծավալները:

**ԱԶԱՏՈՒԴԻ ՄԻՄՈՆԻ ՄԻՄՈՆՅԱՆ**

*ԵՊԴ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ուսանող  
էլ. փոստ՝ azatoohi\_xx@yahoo.com*

**ՎՈՒԴՐՈ ՎԻՆՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ ԵՎ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ**

Տասնամյակներ շարունակ Հայոց Ցեղասպանության ոգեկոչումը եղել է հիշատակի օր, եղել է մեր նահատակներին սգալու, մեր անհաշիվ կորուստների ցավը մորմոքելու օր: Սակայն հայոց պետականության վերստեղծումը որակապես փոխել է մեր իրավիճակը: Մենք մեր արժանի տեղն ենք նվաճել անկախ երկրների շարքում, նվաճել ենք մեր շահերը պետականորեն պաշտպանելու և մեր իրավունքներին տեր կանգնելու հնարավորություն: Հայաստանի Հանրապետությունը այսօր, որպես պետությունների ընտանիքի լիիրավ անդամ և միջազգային իրավունքի կրող, իրավասու է իր և համայն հայության իրավունքները պաշտպանելու միջազգային իրավունքի հիման վրա, պահանջելու, որ երկրները և առաջին հերթին Թուրքիան անշեղորեն իրագործեն Հայաստանի և հայ ժողովրդի առջև ստանձնած պարտավորությունները, կյանքի կոչեն միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված հայ ժողովրդի իրավունքները:

Բովանդակ հայ ազգը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին զուգընթաց կարող է և պետք է բացի պայքարելու երկրորդ ճակատը՝ փորձելով օգտագործել իր իրավունքները:

Հայաստանի Հանրապետության տարածքային իրավունքները հստակեցնող և տիտղոսը ամրագրող փաստաթղթերից կարևորագույնը Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո թոմաս Վիլսոնի (1913-1921 թթ.)՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև սահմանը որոշող Իրավարար վճիռն է (Arbitral Award)՝ կատարված և ուժի մեջ մտած 1920 թ. նոյմբերի 22-ին:

1920 թ. ապրիլի 25-26-ին Դաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը՝ բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, որոշում կայացրեց դիմել ԱՄՆ նախագահին երկու խնդրանքով.

ա) ստանձնել Հայաստանի մանդատը,

բ) իրավարար վճռով որոշել Հայաստանի և Թուրքիայի սահմանը<sup>1</sup>:

Ըստ իրավարար վճռի, Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ ընդհանուր առմամբ 103 599 քվա:

Իրավարար վճիռը վերջնական է և պարտադիր է կատարման համար<sup>2</sup>: Այն չունի ժամանակային սահմանափակում<sup>3</sup>, և նրա կարգավիճակը կախում չունի վճռի հետագա ճակատագրից: Միջազգային իրավունքը, մասնավորապես Հաագայի կոնվենցիայի (1907 թ.) 81-րդ հոդվածը, որով ամփոփվել և ամրագրվել է իրավարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապես չի նախատեսում վճռի չեղյալ հայտարարում<sup>4</sup>: Ըստ միջազգային իրավունքի՝ կողմերը, համաձայնվելով իրավարար որոշմանը ներկայացնել իրենց վեճը, մեկընդմիջտ ընդունում են, որ իրենց կողմից կատարման համար պարտադիր կլինի իրավարարի ցանկացած վճիռ<sup>5</sup>: Կողմերից մեկի մերժումը ի կատար ածելու իրավարարությունը, չի ազդում վճռի վավերականության վրա: Ըստ այդմ, քանի որ իրավարարության հայցը ներկայացվել է ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև 16 այլ երկրի կողմից, ուստի վճիռը պարտադիր է բոլոր հայցվորների համար: Այն պարտադիր է նաև իրավարարի՝ Միացյալ Նահանգների համար, քանի որ ԱՄՆ նախագահի ցանկացած պաշտոնական դիրքորոշում հանդիսանում է երկրի դիրքորոշումը<sup>6</sup> և իրավարարությունից բխող քայլերը պարտադիր են կատարման համար<sup>7</sup>: Հայաստանը, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, կարող է ՄԱԿ-ի միջազգային

<sup>1</sup> The Treaties of Peace, 1919-1923, vol. I, New York, 1924, p. xxxii.

<sup>2</sup> A Dictionary of Arbitration & its Terms, (ed. Seide K.), New York, 1970. p. 32.

<sup>3</sup> **Luzius Wildhaber**, Treaty Making Power & Constitution, Basel & Stuttgart, 1971, p. 98.

<sup>4</sup> Manual of Public International Law, (ed. Sorensen M.), New York, 1968, p. 693-4.

<sup>5</sup> A Dictionary of Arbitration and its Terms, նշվ. աշխ. էջ 27:

<sup>6</sup> **Quincy Wright**, The Control of American Foreign Relations, New York, 1922, p. 38.

<sup>7</sup> **John Collier**, The Settlement of Disputes in International Law, Oxford, 1999, p. 265.

դատարանի միջոցով (Միջազգային դատարանի կանոնադրության 36-րդ հոդվածի 2 կետի (ա) և (բ) ենթակետերի հիման վրա) հավաստել Վիլսոնի իրավարար վճռի վավերականությունը և դրանով իսկ վերահաստատել իր տիտղոսը իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքի վրա:

ԱՄՆ բարձրագույն գործադիր իշխանությունը, վավերացնելով Վիլսոնի վճիռը, այն դարձրել է ԱՄՆ ներքին օրենսդրության մաս: Իրավար վճիռը վավերացված է Ամերիկայի Միացյալ Նահանգների պետության մեծ կնիքով: Ըստ այդմ, Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը ԱՄՆ պետության անվերապահ պարտավորությունն է:

Սույն իրավական փաստաթղթով Հայաստանի Հանրապետության տիտղոսը ճանաչվեց և իրավունքները հաստատվեցին հայության բնօրրան-հայրենիքի մի փոքր մասի՝ նրա հյուսիսարևելյան հատվածի վրա: Իրավարար վճիռն իր կայացման և ուժի մեջ մտնելու պահից (22.11.1920 թ.) կատարման համար անվերապահ, պարտադիր, իրավաբանական տեսանկյունից անբեկանելի և իրավական հետևանքների առումով անժամանցելի է:

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող իրավարար վճիռը (22.11.1920 թ.) կատարման համար պարտադիր փաստաթուղթ է ներկայումս ՄԱԿ-ի 192 անդամ պետություններից 142-ի համար, այդ թվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական հինգ անդամներից չորսի համար՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն և Չինաստան:

Հայկական հարցը ներկա փուլում ունի երեք հիմնական բաղադրիչ՝ տարածքային, նյութական և բարոյական: Այս եռամիասնության մեջ տարածքային բաղադրիչն ամենաէականն է:

Մարդկային կյանքը գերագույն և բացառիկ արժեք է: Խոսելով Հայոց ցեղասպանության մասին՝ մենք առաջին հերթին, և զրեթե բացառապես, շեշտել ենք հայ ժողովրդի մարդկային կորուստները: Սակայն ցեղասպանության տարիներին հայ ժողովուրդն ունեցել է նաև հսկայական նյութական կորուստներ: Անվիճելի է, որ ցեղասպանության ածանցյալ նպատակներից է եղել հայ ժողովրդի անհատական և հավաքական սեփականության յուրացումը:

Նյութական հատուցումն առաջին հերթին պետք է ընդգրկի հայության և Հայաստանի Հանրապետության կրած ուղղակի նյութական կորուստները, զանազան հաշվարկներով և ներկա փոխարժեքային դրսևորմամբ, 40-100 միլիարդ ԱՄՆ դոլար:

Բարոյական հատուցումը պետք է ընդգրկի ոչ միայն Թուրքիայի հանրապետության կողմից Հայոց Ցեղասպանության ուղղակի ճանաչումն ու միանշանակ դատապարտումը, այլև պետք է խորանա հաշտեցման ծրագրի իրականացմամբ:

Պետք է սեփական կամքով հրաժարվել մեր ազգային իրավունքներից՝ արդարանալով, որ ՀՀ-ն դեռևս չի կարող թելադրել իր խաղի կանոնները աշխարհի գերտերություններին: Հարկավոր է հավատալ, որ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԷԼ Է ՈՒԺ ԾՆՈՒՄ:

**ՆԵՐՍԻ ԱՇՈՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*ԵՊՅ, Հոգեբանության և փիլիսոփայության*

*ֆակուլտետ, ուսանող*

*Էլ. փոստ՝ n.vardanyan91@gmail.com*

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ**

Մենք՝ հայերս, հայացք նետելով մեր անցյալի պատմության էջերին, ամեն քայլափոխին կանգնում ենք մեր ժողովրդի համար ամենացավալի փաստի առաջ. ցեղասպանություն կամ Հայոց Մեծ Եղեռն բառերը սարսուռ են առաջացնում յուրաքանչյուրիս մոտ: Մենք շարունակում ենք ապրել, զարգանալ, կառուցել և ծաղկեցնել Հայաստանի Հանրապետությունը՝ սակայն կրելով մեր մեջ անցյալից մնացած բազմաթիվ չբուժված վերքեր, որոնք մեր կյանքի այդ դժվարին ճանապարհին միշտ իրենց զգացնել են տալիս: Մայքլ Սխուդսոնը նշում էր, որ անցյալը, որոշ իմաստով և որոշ պայմանների դեպքում, մեծապես դիմադրողական է իրենից վեր կանգնելու փորձերի նկատմամբ:

Ցեղասպանության արտացոլումը պատմական հիշողության մեջ նկատվում է արդեն իսկ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ, ովքեր դեռևս ոչ մի կոնկրետ տեղեկատվություն չունեն ցեղասպանության վերաբերյալ: Որոշ պրոյեկտիվ թեստերի և հարցումների միջոցով մենք փորձեցինք պարզել նրանց պատկերացումները ցեղասպանության, ինչպես նաև պարզապես թուրքերի նկատմամբ: Պետք է նշել մի փաստ. հենց այդ տարիքում է երեխայի մոտ ձևավորվում «պատերազմ», «թուրք», «ցեղասպանություն» հասկացությունների համդեպ հիմնական վերաբերմունքը: Ահա թե ինչու շատ կարևոր է զգուշորեն մոտենալ ուսուցման և ինֆորմացիայի տրամադրման հարցին, քանզի հետազոտությունները ցույց են տալիս, որ ամեն բառ, անգամ պատահականորեն ասված, կարող է առաջացնել երեխաների մոտ միանշանակ վերաբերմունք: Առաջին վայրը, միավորը, որի ներսում սովորում են ընկալել սեփական պատմությունը և ստանալ որոշակի ինֆորմացիա, ընտանիքն է, որը վճռական դեր է խաղում երեխայի սոցիալիզացման մեջ: Վեր-

զիններս ինչ-որ ձևով փորձում էին ներկայացնել իրենց ծնողների կամ գուցե ուսուցչի պատկերացումները թուրքերի նկատմամբ, սակայն իհարկե իրենց սեփական մեկնաբանությամբ և ընկալմամբ: Եթե, օրինակ, նրանց ընտանիքի ներկայացուցիչների կամ ուսուցչի կողմից ասվել է, որ դա եղել է վաղուց և այժմ այն թուրքերը, որոնք մեզ կոտորել էին, ողջ չեն, այլ «Ուրիշ թուրքեր» են, երեխաները դա ընկալում են որպես. «Այն ժամանակվա թուրքերը վատն էին, իսկ հիմա լավը», կամ «Եթե նրանք այն վատ թուրքերը չեն, հետևաբար լավն են»: Հետազոտություններս տվեցին հետևյալ արդյունքը. երեխան ինֆորմացիան արտացոլում է ամբողջովին բևեռականացված, և դա էլ հենց մեր անգիտակցականի վառ դրսևորումներից մեկն է: Այս ամենը շատ կարևոր է երեխայի հետագա վերաբերմունքի ձևավորման համար:

Նրանց տրված էր հանձնարարություն՝ նկարել ցեղասպանությունն իրենց պատկերացմամբ, իսկ քանի որ շատերը ծանոթ չէին այդ բառին, պարզապես նկարեցին «Հային և թուրքին»: Այնուհետև աշխատանքները ենթարկվեցին վերլուծության: Ազրեսիան գրեթե բոլոր նկարներում (բացառությամբ 2 աշխատանքի) հստակ երևում էր: Հիմնականում առկա էին տարբեր սիմվոլներ՝ Արարատ լեռը, որը այժմ Թուրքիայի տարածքում է, դրոշներ, թրեր, կռվող ամբոխ: Պետք է նշել, որ նրանք ցեղասպանություն ասելիս հաճախ պատկերացնում էին պատերազմ, որը ավարտվել է հայերի պարտությամբ:

Նրանց աշխատանքների մեջ նկատվում է զոհի հոգեբանությունը. եթե օրինակ պատկերված էր հայ և թուրք, ապա հիմնականում թուրքը հարձակվողի դերում էր, իսկ հայը պաշտպանվողի: Սակայն կային նաև այնպիսիները, որտեղ զոհի հոգեբանության հետ մեկտեղ նկատվում էր պայքարելու և հաղթելու ցանկությունը:

Հարցումը ևս տվեց բազմաթիվ հետաքրքիր արդյունքներ: Բոլորը բնականաբար միաձայն սկսեցին խոսել թուրքերի չարության և դաժանության մասին: Երեխաներից ոմանք նրանց մամնեցնում էին նենգ զազանների կամ իրենց խոսքերով՝ «բոմժերի», որոնք անգրագետ են, չգիտեն գրել և կարդալ: Իսկ ցեղասպանություն ասելիս հիմնականում ոչ թե կենտրոնանում էին զոհերի քանակի վրա, այլ պատկերացնում էին պետության տարածքների կորուստ. «Թուրքերը գրավեցին մեր հողերը, մեր երկիրը», «Թուրքերը խլեցին մեզանից Արարատ լեռը» և այլն: Դա ևս բացատրելի է, քանզի մարդկային հասարակության առաջացման և ձևավորման մեխանիզմների հետ,

գործում է նաև որոշակի տարածական բաշխվածության, գտնվելու վայրի գեներտիկ ամրապնդման մեխանիզմ:

Երբ խոսքը գնաց այն մասին, թե իրենք ինչպես կվարվեն թուրքի հետ, երեխաները կրկին սկսեցին տալ ագրեսիվ պատասխաններ, բայց բավական էր փոքր-ինչ փոխել հարցադրումը, և ասել, որ դա կարող էր լինել մի փոքրիկ թուրք երեխա իրեն հասակակից, որը ոչ ոքի ոչինչ չէր արել, և երեխաները այն նույն թուրքին գիտակցում էին, որ թուրքին ծեծելու փոխարեն կարելի է հասկանալ նրան, ընկերանալ և անգամ շատերի խոսքերով. «Խնդրել, որ նա գնա իր ազգին ասի, որ մեզ էլ ձեռք չտան»: Հետաքրքիր էր նաև այն, որ ոմանք ցանկություն հայտնեցին նրանց գրել-կարդալ սովորեցնել՝ համոզված լինելով, որ թուրքերն այդ ամենը չգիտեն:

Հարցումն ավարտելուց հետո, երբ պարզ դարձավ նրանց ենթագիտակցական վերաբերմունքն ու քիչ թե շատ ունեցած ինֆորմացիան, շատ կարճ և մատչելի լեզվով ներկայացվեց երեխաներին ցեղասպանության մասին որոշ տվյալներ: Նրանք լսում էին շատ ուշադիր՝ ձգտելով ֆիքսել իմ բոլոր արտաբերած բառերը: Յուրաքանչյուր նախադասություն առաջացնում էր նրանց մոտ բազմաթիվ հարցեր, անթիվ ինչուներ: Ահա մի քանի օրինակ. «Իսկ մենք ի՞նչ էինք արել, որ կոտորել են», «Իսկ ինչո՞ւ են նաև երեխաներին կոտորել», «Իսկ ինչո՞ւ մենք չենք պաշտպանվել, մենք այդքան թո՞ւյլ էինք» և այլն: Հարկ եղավ մի կողմ դնել պատմական տվյալների մասին ինֆորմացիայի տրամադրումը և խոսել այն մասին, թե մենք ինչքան ուժեղ և խելացի ազգ ենք, իսկ չենք պաշտպանվել միայն այն պատճառով, որ կոտորելուց առաջ հավաքել են մեր բոլոր զենքերը: Այդ պահին երեխաների ճնշված հայացքներին փոխարինելու եկավ հավատը ազգի նկատմամբ, ինքնավստահությունը, նկատվում էր աչքերին փայլ, իսկ ուղղվող հարցերը ամբողջովին փոխեցին բովանդակությունը. «Իսկ ինչո՞ւ հիմա չենք գնում պայքարելու ու գրավելու մեր հողերը, երբ արդեն զենք ունենք»: Այս բոլոր օրինակներից հստակ երևում է մի բան. երեխան ապրում է իր ազգի պատմությամբ, եթե անգամ դա գտնվում է ենթագիտակցական մակարդակի վրա: Մեր ամեն ասված խոսքը, մեր սեփական վերաբերմունքն ու շեշտադրումները, ցանկացած տրված ինֆորմացիա կարող է իր հետքը թողնել երեխայի ամբողջական վերաբերմունքի ձևավորման վրա, իսկ հատկապես այժմ՝ այս լարված քաղաքական իրադարձությունների ժամանակահատվածում, շատ կա-

րևոր է կրթել հայրենասեր և առողջ հասարակություն, որը, կրելով իր մեջ պատմական հիշողությունը, ադեկվատ կմտտենա ցեղասպանության հարցին, և իր ազգը թույլ կամ ճնշված համարելու փոխարեն՝ ամեն կերպ կփորձի քայլեր ձեռնարկել, որպեսզի իրոք ունենա հզոր և անկոտրում երկիր:

Աշխատանքի նպատակն է հասկանալ երեխայի ցեղասպանության ընկալումներն և պարզել, թե ինֆորմացիան ինչպես է ընկալվում և մեկնաբանվում երեխայի կողմից, ով դեռևս ունի պատկերացումներ ենթագիտակցական մակարդակի վրա: Ահա թե ինչու մենք որոշեցինք ուսումնասիրել հենց այդ տարիքային խումբը:

Այժմ կան անթիվ աշխատություններ ցեղասպանության վերաբերյալ, սակայն որոնք կրում են քաղաքական կամ պատմական բնույթ: Պետք է խոստովանել, որ ցեղասպանության հոգեբանական վերլուծությունն ու դրա ազդեցությունը ազգային հոգեբանական որակների վրա պակաս կարևոր չէ, քանի որ բոլորս լինելով հայ և կրթելով նոր սերունդ, պիտի հաշվի առնենք այդ ամենն ու ձգտենք ունենալ հոգեբանորեն առողջ ու հայրենասեր հասարակություն, որը չնայած ամեն ինչի, կհաղթահարի կյանքի բոլոր դժվարությունները, կձգտի բարձունքների ու կպարծենա իր նախնիներով: